



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

865

7-12

The image shows the front cover of an old book. The cover is decorated with a marbled paper pattern, featuring a complex, organic, cell-like or web-like design in shades of dark green, black, and cream. The marbling is dense and covers most of the surface. In the upper left corner, there is a small, white, octagonal paper label with a blue border. The number '865' is written in blue ink at the top of the label, and '7-12' is written below a horizontal blue line. The left edge of the book shows a portion of the spine, which is bound in a plain, light brown or tan material. There are some signs of wear and discoloration on the cover, particularly near the top edge and around the label.

~~XI~~

VII-61
-1

1291

ՀՐԱՏԵՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. Մ. ՄԱՂԽԱՆՆԵՐԻ

ԳԱՀԱՐ ՄԻՐԶԻ
ԵՒ
ԶՕՀԲԱ ԽԱՆՈՒՄԻ
ՀԵՒԵԱԹՐ.

ՀԱՅԵՐԵՆ ԵՒ ԹՈՒՐԿԵՐԵՆ ԵՐԳԵՐՈՎ

3539
ԲՏԳ-Դ

ՓՈՒՆԳՐԵՑ ԹՈՒՐԵՐԵՐՆԵՑ
ԱՂԻՔ. ՄԻԹՈՐԵԱՆ.



Ա. Լ. ԲՈՍՆԻՅԱՆՈՎ
Արագածիկ-Տպարան Ա. Մ. Մաղխանների
1901

Հանրային Գրադարանի Գրքերի Կառավարության
ՀԲԵՏԵՐԱՎՈՒԹՅՈՒՆ Ե. Մ. ՄԱԼԽՈՍԵԱՆՑԻ

Հասցե՝ Երևան-Ք. Կոմիտասի պող. 10

ԳԱՀԱՐ ՄԻՐԶԻ ԵՒ ԶՕՀԲԱ ԽԱՆՈՒՄԻ

ՀԵՔԵՆԹԸ



ՀԱՅԵՐԵՆ ԵՒ ԹՈՒՐԿԵՐԵՆ ԵՐԳԵՐՈՎ

ՓՈՒՆԴՐԵՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻՑ
ԱՂԷՔ. ՄԻՒԹԱՐԵԱՆ.



ԱՂԷՔՍԱՆԳՐԱՊՈՂ
Ազգային-Տպարան Ա. Մ. Մախառեանցի
1901

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՂԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ — ՄԱՐԳԱՐԱՆԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

Ընդհանուր տպ. Կ. Ա. Մխչ. Քարապետյան

Дозволено цензурою, 30 Декабря 1900 года. Гор. Тифлисъ.

475 865

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏՄԱԿԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ

ԴԱՀԱՐ ՄԻՐՁԻ ԵՒ ԶՕՀՐԱ ԽԱՆՈՒՄԻ

Հ Ե Ք Ե Ա Թ Ը

Պատմում են որ ժամանակով Թուրքական զահի վերայ Հաթամ Սուլթան (Եմիր Բէյ) անունով մի անուանի թագաւոր է նստած եղել և ունեցել է, Ահմատ վազիր անունով մի եղբայր. որոնք երկուսն էլ երկար ժամանակ մնացել են անժառանգ: Թէպէտ և ամեն ինչ ունեցել են—երկիր, ժողովուրդ, գանձ ու մեծ կարողութիւն, բայց նրանց ամեն օրուայ միակ մրտածելու առարկան ու մեծ հոգս պատճառող բանը եղել է ժառանգ ունենալը, որ ապագային իրանց անցմանից յետոյ— զահը ժառանգէ և ունեցած կարողութեանը տիրելով, երկիրն ու ժողովուրդը կառավարէ:

Երկար ժամանակ այսպէս հոգսի ու մտածմունքի մէջ տատանուելով, մի օր Սուլթանը կանչում է իր փոքր եղբօրը—Ահմատ վազիրին ու ասում.— «մեր օրերը լցուած են, սիրելիս, մենք հետ զհետէ հասակներս առնում մեծանում ենք և վաղը միւս օր ձերութեան շէմ-

քին ոտք կը դնենք, բայց մեզանից մէկն ու մէկս գոնէ, արու կամ էշ, մի ժառանգ անգամ չուենինք, որ մեր մահից յետոյ իմ գահը ժառանգէ: Այս բանը մեծ ցաւ ու հարուած է իմ սրտին, բայց չը գիտեմ թէ, դու ի՞նչ ես մտածում այս մասին: Այս նեղ ու դառն դրութիւնից դուրս գալու համար. չենք կարող արդեօք մի ելք կամ հնար գտներ:

— «Քանի որ քեզ նման թագաւոր եղբայրը կենդանի տէր է իմ գլխին, ես ի՞նչ կարող եմ ասել կամ անել: Արահ, ինչ որ կարող ես և ցանկանում ես. ո՞վ կը համարձակուի քոյ կամքին ընդդիմանալ:»

Եղբօրից այս մեղմ ու հաճելի պատասխանը լսելով Սուլթանը, սրտապնդուած շարունակում է. — «աշխարհում ամեն բան հնար ունի, ինչո՞ւ պէտքէ մեր զաւակ ունենալը անհնարին լինի: Այսօր և եթ գնայ ճանապարհի պատրաստութիւն տես, որ վաղը—միւս օրը ճանապարհ ընկնենք գէպի մի կողմ, ուր որ Աստուած մեզ կառայնորդէ, դուցէ մեր ցաւին մի ճար ու ճարակ գտնենք:»

Պատրաստութիւն տեսնելուց մի օր յետոյ, երկու եղբայրներն Աստուած յիշելով ուղի են ընկնում: Շատ են գնում թէ քիչ, այդ միայն Աստուած գիտէ, հասնում են մի անապատ—անմարդաբնակ տեղ և ձիաներից վեր են գալիս մի

ծառի հովանու տակ, աղբիւրի մօտ, հանգստանալու ու նախաճաշիկ անելու: Նախաճաշելուց յետոյ, երկուսի վերայ էլ, մի տեսակ մրափ է գալիս և տեղն ու տեղը ընկողմնում ու քնում են: Միաժամանակ երկուսն էլ երագներում տեսնում են, որ իբր թէ մի դաւրիշ ծառի տակից վեր կացաւ մօտեցաւ իրանց ու հարցրուց. — «արդեօք ո՞ւր էք գնում»:

Նրանք էլ պարզաբար— առանց ծածկելու իրանց բուն նպատակը— պատմում են դաւրիշին ու մտածում թէ, որքան էլ չը լինի, աշխարհք տեսած կարդացող մարդ է, դուցէ մի հնարաւոր բան կասէ, որ իրանց ցաւին օգտակար լինի:

Դաւրիշը նրանց պատմութիւնը լսելուց յետոյ ասում է. — «ձեր երկրից հեռանալը բոլորովին աւելորդ է: Դուք կարողութեան տէր մարդիկ էք, յոյսերդ Աստուծու վերայ դրէք, աղքատներին կերակրեցէք, մերկերին հագցրէք և տնանկներին ու կարօտեալներին ամեն կերպ բաւականութիւն տուէք: Աստուած էլ նրանց օրհնութեան ու բարեմաղթութեան ձայնը լսելով, ձեզ կողորմի և ձեր նպատակը կը կատարէ...»: Այս ասելով, դաւրիշը յանկարծ աչքներից անհետանում է: Իսկ նրանք, այս անսպասելի պատահմունքից սթափած զարթնում են և միմեանց հաղորդում երագներում տեսած անցքը:

Մի փոքր լուսթիւնից յետոյ, Սուլթանն ասում է եղբօրը.— «գուցէ սա էլ Սասուածանից էր, որ մի քանի ժամուայ ճանապարհ գալուց յետոյ, երազներումս այսպէս պատահեցաւ: Վերկաց վերադառնանք տուն և դաւրիշի տուած խորհուրդները մի առ մի անթերի կատարենք, գուցէ Աստուած ողորմի մեզ և մեր սրտի խորհուրդները կատարէ. որովհետև Աստուծոյ մօտ անհնարին ոչինչ չկայ: Ինչ որ մարդկանց համար անհնարին է, Աստուծոյ մօտ հնարաւոր է»: Այսպէս խորհրդածելուց յետոյ, երկուսն էլ ձի նըստած կրկին վերադառնում են տուն:

Բայց մտածմունքի մութն ու մառախուղը Հաթամ Սուլթանի սրտից չի վերանում. անզաւակ լինելու ցաւն ու կսկիծը հրաբխի նման միշտ եռում է սրտի խորքերում ու հանապազայրում— տոչորում նրան:

Այսպէս մէկը միւսի յետեից անցնում էին օրերն ու ամիսները և Հաթամ Սուլթանն ու եղբայրը անխօտոր հետեւելով երազներում տեսած դաւրիշի տուած խորհուրդներին, ձեռներից եկած ամեն կերպ օգնութիւն չեն խնայում ոչ մի մարդից:

Մի օր դարձեալ զաւակ ունենալու հոգսը խիտ ճնշում է Սուլթանի սրտին. կանչում է եղբօրն ու առաջարկում, որ սրտի թախիծը հեռացնելու ու ինչպէս ասում են «սիրտը մի քիչ

բացուելու համար» միասին զննն խաս բաղչէն զբօսնելու:

Երկու եղբայր միասին վեր են կենում ու կամաց կամաց զրից անելով գնում հասնում խաս բաղչէն, որ պալատից այնքան էլ հեռու չէր: Բայց ճանապարհին տեսնում են, որ մի դաւրիշ նստած ձայն է տալիս.— «ով որ ինձ մի ոսկի տայ, Աստուած նրա սրտի խորհուրդը անկատար չի թողնիլ»: Այս խօսքերը լսելով Սուլթանն՝ հետաքրքրվում ու ինքն իրան մտածում է, «հազարաւոր ոսկիներ բժիշկներին ու այլև այլ մարդկանց տուի, ոչինչ չօգտուեցայ... բայց այս դաւրիշների մէջ խելօք ու զիտուն մարդիք շատ են պատահում, բեր սրան էլ մի հազար ոսկի տամ, թող մի աղօթք էլ սա կարգայ ու խնդրուածք անէ. գուցէ Աստուած սրա ձայնը լսէ ու իմ նպատակը կատարէ»: Այս ասելով վեր է առնում հազար ոսկի աալիս դաւրիշին: Դաւրիշը ոսկիքն ստանալով, մի աղօթք է կարդում, խնդրուածք անում ու իսկոյն անյայտանում է:

Խաս բաղչա կոչուած տեղը, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ՝ մի կախարդական ու դիւթիչ պարտեզ, որ լի էր հազարաւոր գոյնգգոյն ծաղիկներով, հազուագիւտ պտուղներով, հազարգունեան թըռչուններով, բիւրաւոր կենդանիներով և դալար ու փափուկ բոյսերով... Միով բանիւ մի կատարեալ դրախտ էր, որ մարդկային հանճարն ու

ձեռքք ստեղծել և գրել էին երկրի մի անկիւնում:

Պարտէզը հասնելուց լետոյ, սկսում են սաղարթախիտ ծառերի հովանու տակ զրոյց անելով պտըտիլ, և այդ ժամին պատահում են մի շատ սրտաշարժ ու գրաւիչ տեսարանի: Թռչուններն իրանց ձագերին թուցնել են սովորեցնում և այնպէս աղաղակ ու ծվծվոց են բարձրացրել պարտիզում, որ լեզուով պատմել չի լինի: Այս տեսարանը այն աստիճան է ազդում Սուլթանի սրտին, որ աչքերը դէպի երկինք ուղղած մըմընջում է.— «ո՛վ Աստուած, այս աշխարհում կենդանիներին անգամ ուրախութիւն ես տուել, որ իրանց ձագերին նայելով ուրախանում են. գոնէ մեզ էլ մի մի զաւակ տուր, որպէս զի մենք էլ նրանց վերայ նայելով ուրախանանք ու քեզ հանապաղ փառք տալով սուրբ անունդ օրհնենք»:

Սրանից լետոյ տեսնում է, որ մի մաքուր հազնուած դաւրիշ նստած է ծառի տակին, որի կողքին դրած են մի քանի գրքեր ու թանաքաման, և գրիչը ձեռքն առած գիր է գրում:

Սուլթանը Ս. հմատ վազիրի հետ դաւրիշին այս դրութեան մէջ տեսնելով, քայլերն ուղղում է դէպի այն կողմը և պատկառանքով մօտենալով նրան՝ ասում.— «Ա՛յ դաւրիշ, ո՞վ ես դու, կամ սրանք ինչ գրքեր են... թէ որ մի շնորք ունիս՝ մեզ յայտնէ, որ գիտենանք»:

Սուլթանից այս խօսքերը լսելով, դաւրիշը

պատասխանում է.— «Ես շատ շնորքներ ունիմ, մանաւանդ թէ մարդու ապագան լաւ գուշակել գիտեմ և կախարդական գրեր պատրաստել, որ ամենևին սուտ չեն դուրս գայ...»:

— «Եթէ այդպէս է, ո՞վ դաւրիշ, ես մի ծածուկ նպատակ ունիմ, թէ իմ այդ գաղտնի խորհուրդը գուշակելով իմացար, այն ժամանակ գիտեմ որ շնորք ունիս և քեզ առատօրէն կը վարձատրեմ»:

Դաւրիշը «զար գցելով» և գուշակելով ասում է,— «Տէր արքայ, դու և վագիրը մի և նոյն նպատակի, այն է՝ զաւակ ունենալու համար էք միշտ մտածում, էլ ուրիշ հոգս ու ցտւ չունիք. բայց զիտցէք, Տէր թագաւոր, որ Աստուած քեզ մի աղջիկ ու վագիրին մի տղայ զաւակ պէտքէ պարգևէ, որ ժամանակին այդ երկուսը միմեանց հետ արժանի լինին ամուսնանալու»:

Սուլթանը այս խօսքերը լսելով դաւրիշից, զարմացմամբ նայում է եղբօր երեսին ու դաւրիշին իւր ուղիղ գուշակութեան համար գովելով ասում.— «Ապրիս, դաւրիշ բաբա, լաւ գուշակեցիր, եթէ մեզ մի օգնութիւն լինի, գիտեցիր որ քեզանից կը լինի, այսուհետև դու գիտես»:

Դաւրիշը իւր ասածներին հաւանութիւն տրւած խօսքերը Սուլթանից լսելով, ծոցից երկու խնձոր է հանում և վերաները կարդալով ու աղօթելով՝ կարմիրը տալիս է Սուլթանին ու կա-

նանչը վազիրին և ասում.— „Տէր Արքայ, քեզ տուած խնձորս դու քո կնոջ և վազիրին տուածըս նա իւր կնոջ հետ կուտէք... այնուհետև Աստուծով երկուսն էլ կը յղանան և ծնուելուց յետոյ աղջկայ անունը Զօհրա, իսկ տղայի անունը Գահար կը դնէք: Սակայն մինչև հասակները առնել — մեծանալը, միմեանցից անբաժան պիտի պահէք և այժմեանից դաշինք պէտքէ դրնէք ձեր մէջ, որ արբունքի հասնելուց յետոյ, Աստուծոյ կամքով, միմեանց վերայ պսակէք:”

Հաժամ Սուլթանը այլ պատուէրը դաւրիշից ընդունելուց յետոյ, նրան առատօրէն վարձատրում է ու եղբօր հետ միասին ուրախ սրտով մեկնում այնտեղից:

Գաւրիշի գուշակածի նման երկու կանայքն էլ յղի են մնում և ինն ամիս, ինն օր ու ինն բոպէ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ, երկուսն էլ ծնում են: Սուլթանի աղջկայ անունը դնում են Զօհրա, իսկ վազիրի տղի անունը Գահար:

Մանուկները համարեա միմեանցից անբաժան, քրոջ ու եղբօր պէս շատ խնամքով պահվում — մեծանում էին, մեծաւ մասամբ արքունիքում. և օրէց օր տեսնելով կայտառ մանուկների մեծանալը, ծնողների ուրախութեանը չափ ու սահման չկար:

Երբ հասնում է ժամանակը և մանուկները

մտնում են 7—8 տարեկան հասակի մէջ, Սուլթանը սկսում է մտածել նրանց կրթութեան ու դաստիարակութեան մասին: Մի օր կանչում է մօլլա — ուսուցչին ու երեխոց ուսման հոգսը նրան յանձնարարելով, խիստ պատուէր է տալիս, որ լաւ հոգ ու խնամք տանի մանուկների ուսման և կրթութեան վերայ ու շատ լաւ հսկէ նրանց բարոյական կողմին, որ երբ և իցէ չը լինի թէ, փչացած վարք ու բարքի տէր անձանց պատահելով, իրանք էլ փչանան ու արատ բերեն իրանց անուանը:

Մօլլան Սուլթանի պատուէրն ստանալուց յետոյ, մանուկներին ընդունում է իւր խնամակալութեան տակ ու այն օրից սկսած հոգում է նրանց կրթութեան մասին ու հոգում նրանց բարոյականութեան վերայ: Զօր ու գիշեր մէկ արած, խեղճ մօլլան անդադար աշխատում է, որ պատասխանատու չը մնայ Սուլթանի առաջ, իւր ստանձնած ծանր պարտականութեան համար: Պէտքէ ասել, որ մօլլան վախենալով իւր վերայ դրած ծանր պատասխանատու թիւնից մանուկներին դրսի հետ ունեցած յարաբերութիւնից համարեա իսպառ զրկել էր և այնպէս խիստ ու առանձնացած էր պահում, որ խեղճ մանուկները տարիներով ոչ ոքի հետ յարաբերութիւն չունէին, բացի իրանց մի քանի մտերիմներից և դպրոցում եղած ընկերներից:

Ասպէս տարիները հետ զհետէ գլորվում էին և մանուկները հասակներն առնելով մեծանում ու զարգանում:

Մի օր էլ (13—14 տարեկան հասակում) մօլլայի բացակայութեան միջոցին, երբ Զօհրան էլ քնած էր, Պահարը մօլլի պահարանից մի գիրք է վեր առնում ու սկսում կարգալ: Այդ գիրքն իւր մէջ պարունակում էր «ԼԵՅԼԻ ՄԱՋՆՈՒՆԻ» սիրահարական վէպը կամ հեքեաթը: Քանի գրքի խորն է թափանցում, Պահարի աչքերն այնքան լայն են բացվում և մարմինը փշաքողուելով՝ մի տեսակ սարսուռ է զգում և սիրոյ կայծը սկսում է հրդեհել նրա նոր զարթած սիրտը:

Համարեա գիրքն աւարտելու մօտ է լինում, որ Զօհրան արթնանում է... բայց Պահարը աճապարում է մի կերպ ծածկել նրանից իւր կարգացածի բովանդակութիւնը: Սակայն Զօհրան այնքան հետաքրքիր է լինում դէպի Պահարի գործունէութիւնը, որ իւր հարցմանը թէ՛ «այդ թնչ էիր կարդում», լրիւ պատասխան չստանալով, ինքը տեղից վեր է կենում և գիրքը ձեռքն առնելով կարդում մինչև աւարտը:

«ԼԵՅԼԻ ՄԱՋՆՈՒՆԻ» վէպը ուսուցչից ծածուկ կարդալով, նրանց դրութիւնն այնուհետև սկսում է փոխուիլ և ամեն բանի տեղի տալով՝ սիրոյ ասպարէզն է բացվում նրանց առաջ: Մանաւանդ երբ մի օր դպրոց յաճախած միջոցին մի կախարդ

կին ճանապարհին պատահելով Պահարին յայտնում է, որ նրանք քոյր ու եղբայր չեն: (Մինչև այդ օրը Պահարը գիտեցել է թէ, Զօհրան իւր հարազատ քոյրն է:)

— «Հապա մենք թնչ ենք, հարցնում է նրան Պահարը, չէ որ նա իմ քոյրն է»:

— «Ոյ, պատասխանում է կախարդուհին, Զօհրան Սուլթանի աղջիկն է, իսկ դու վազիրի տղան ես»:

Այդ օրից նրանց սէրն ևս առաւել սկսում է աճիլ ու բորբոքուիլ և երկուսն էլ սիրոյ բաժակը մինչև յատակը քամում են... այնուհետև համարեա ամեն ինչ մոռացած, միմիայն սիրոյ մասին են մտածում և կատարեալ սիրահարների պաշտօն կատարում... ինչպէս ժողովուրդն ասում է «Աւետարանը տալիս են, տամբուրէն առնում»:

Թէպէտ դաստիարակ մօլլան նկատում է, որ իւր սանիկները օր օրի վերայ ուսման մէջ փոխանակ յառաջադիմելու, հետ զհետէ թուլանում— յետ են գնում և կամաց կամաց սկսել են արտաքին աշխարհի հետ յարաբերութիւն ունենալ— քէֆ ուրախութիւնների յետևից ընկնիլ ու մասնակցիլ: Բայց մի և նոյն ժամանակ վախենում է նրանց այդ վարմունքը Սուլթանին յայտնելու. խեղճը մնում է տարակուսած ու մի անել դրութեան մէջ:

Մի օր էլ երբ Զօհրան ու Պահարը միմեանց փոխադարձապէս սիրաշահելիս են լինում,

որտեղից որտեղ, նրանց քօռ բաղդից, մի քաչալ, որ ճանները տարուել էր և ընկերները նրան ծեծելով հալածել էին, գալիս նրանց լուսամուտի տակովն անցնում է ու աչքովն ընկնում, որ նրանք քնած են: Այդ միջոցին գալում քաչալը պատահելով դաստիարակ մօլլին, դառն կերպով գանգատվում է թէ,— «ահա դընում եմ Սուլթանին ու վազիրին յայտնելու, թէ դու նրանց զաւակներին ինչ տեսակ ես կրթում— դաստիարակում»:

Մօլլան քաչլիկին մի կերպ համոզել— կաշառելուց ու իրանից հեռացնելուց լետոյ, այս անգամ ինքն է աճապարում դէպի պալատ Սուլթանին յայտնելու, որ այնուհետև այլ ևս ինքը չի կարող նրանց զաւակներին դաստիարակել, որովհետև աչքները բացուել են և նրանց զսպելն համարեա անհնարին դարձել:

Զօհրան մօլլի ու քաչլիկի մէջ պատահած անցքը ուրիշներից մի կերպ լսած լինելով՝ մի սրտառուչ երգով Դահարին իմացնում— հասկացնում է.—

Մօլլամըզ գէթտի խապարայ,
 Իէ խապար սան Դահար Միրզայ,
 Եիմտի գեալըր գեթուրուլար,
 Նա՛մ դիար սան Դահար Միրզայ:
 Նա՛մ բախար սան տալտալարտան,
 Հէջ դօրխմիր սան նիւսուպաթտան,

Նա՛մ ամար սան լապի պալտան,
 Նա՛մ ղանար սան Դահար Միրզայ:
 Մեան Զօհրայամ ղալամ ղաշլի,
 Ղալամ ղաշլի, ղարդու սաշլի,
 Բեանի ղօյտըն գեօզի եաշլի,
 Սան գէտար սան Դահար Միրզայ:

Հ * յ է ը է ն Թ * ը Գ.

Մեր ուսուցչին հասաւ լուրը,
 Ընտեղակ ես Դահար Միրզայ,
 Կգայ մեզ կը տանի ջուրը,
 Գու՛ր դեռ խակ ես Դահար Միրզայ:

Ի՛նչ ես նայում ծածուկ տեղից,
 Ձե՛ս վախենում անիրաւից,
 Գուցէ խաբուիս անուշ լեզուից,
 Պատանեակ ես Դահար Միրզայ:

Ես Զօհրան եմ սև ունքերով,
 Խոպուպիք դեղձան մագերով,
 Ինձ թողել ես արտասուելով
 Անգիտակ ես Դահար Միրզայ:

Վերջապէս մօլլան հաննելով պալատ, ամեն ինչ մի ըստ միոջէ պատմում է Սուլթանին և աւելացնում, որ այսուհետև այլ ևս նրանց չի կարելի դպրոցում պահել ու ինքը ոչ մի կերպ չի կարող պատասխանատու մնալ նրանց մասին: Սուլթանը մօլլից լսելով բոլոր մանրամասն

եղելու թիւնը, իսկ ոչնչ հրամայում է, որ միմեանցից բաժանելով, Զօհրային վերադարձնեն պալատ, իսկ Դահարին բանտարկեն: Մի կողմից էլ իւր լրտես Արապին պատուէրում է, որ լրտեսէ ու ամեն ինչ տեղնուտեղը, առանց ծածկելու, իրան յայտնէ. այնպէս որ՝ ոչ ոք ոչինչ չը նկատէ:

Մօլլան արքունիքից վերադառնալով դպրոց, անմիջապէս ձեռնարկում է Սուլթանի հրամանները ի կատար ածել: Նոյն րոպէին Զօհրա խանումին տանում են դէպի արքունիք, իսկ Դահար Միրզին ձերբակալում բանտարկելու:

Դահարը տեսնելով որ Զօհրան իրանից բաժանեցին ու տարան պալատ, ներկայ գտնուող դպրոցական վարչութիւնից ու ոստիկանական պաշտօնեաներից թողաւ թիւն է խնդրում և Զօհրա խանումի հետ ունեցած իւր սէրը արտայայտում հետևեալ երգով.—

Մօլլալար մօլլասի, ալիֆլար խասի,
Իիր տուտի գիլլիա մայիլամ, մայիլ,
Արնմազ—օիրնմազ գեօնկումն փասի,
Իիր ինճա բէլլիա մայիլամ, մայիլ:

Գեօլլարըմըզ օրդակ օյնար դագինան,
Մէճլիսլարտայ սօհրաթ օլուր սագինան,
Տանիշանճազ ախլըմ ալըր նագինտն,
Իիր ֆիթմայ ֆէլլիա մայիլամ, մայիլ:



575
666968

Դահար Միրզայ, երբն գիւլտըր—գիւլուշան,
Տամ երընայ ենկի դիւշուպտըր նիշան,
Եէլ վաւրտուղճազ գիլֆըն դօնար փէրուշան,
Իիր սիայ թէլլիա մայիլամ, մայիլ:

Հ * յ է ր է ն լ * ր 4.

Կարդացողներ ձեր գրուածքներին մատաղ,
Ես մէկ անուշ լեզուի կարօտ եմ, կարօտ,
Սրտիս վերքը չի բժշկուի ալդպէս վաղ,
Քաղցր խօսք ու սրտի կարօտ եմ, կարօտ:

Լճակներում խաղ են անում սագ ու բադ,
Խնճույքներում խաղ-տաղ ասում շատ ու շատ,
Ուրախութեան պատճառ ունիմ լիառատ,
Մի գեղեցիկ դէմքի կարօտ եմ, կարօտ:

Դահար Միրզիս տեղը վարդենաստան է,
Ծաղկալից հոտաւետ մի բուրաստան է,
Ափսոս, վարդըս ուրիշին ապաստան է,
Մի մետաքսեայ ծամի կարօտ եմ, կարօտ:

Երգն աւարտելուց յետոյ, երբ ուզում էին բանտարկել, Դահարը մի կերպ յարմար միջոց է գտնում փախչելու և գնում քաղաքից դուրս մտնում է թանձր եղէգնուտի մէջ: Մի ամբողջ զօր ու գիշեր այնտեղ մնալուց յետ, երբ հալածանքն ու խուզարկութիւնը փոքր ինչ դադարում է, ծածուկ դուրս գալով այդտեղից, դի-

մում է դէպի տուն:

Իսկ Զօհրան արքունիք վերադառնալուց յետոյ, անվերջ մտածում է Ռահարի մասին: Եւ կարծելով թէ, նա դեռ այնտեղ շարունակում է իւր ուսումը և միայն ինքն է գրկուած այդ արտօնութիւնից՝ պատրաստվում էր նորից յաճախել դպրոց: Բայց մայրը նկատելով նրա շարժումները, բարկանում է վերան ու խիստ խօսքերով յանդիմանում և ասում—, որ այսուհետև, թէ դպրոցը և թէ Ռահարը իսպառ մտքիցդ հանէ ու մոռացիր. որովհետև այսուհետև այլ ևս բնաւ նրանց երեսը տեսնել չես կարող:

Փափկասիրտ Զօհրան անգուրթ մօրից այս անողոք վճիռը լսելով, սիրտը բորբոքած հնոցի նրման տակն ու վրայ է լինում և մոլորուած մնալով՝ ինչ անելը չը գիտէր: Լուսամուտից նկատելով որ իւր ընկերուհիներն ու ընկերները յաճախում են դպրոց, սիրտը փղձկելով, սրտառուչ կերպով հետևեալ երգը ուղղում է նրանց.—

Եավաշ գէտն բանտայ գեալիմ եօլտաշլար,
Գէտըն դէլըն Ռահար հիւմմաթ էլլասն,
Բուննան բէլլայ եաման օլտի բու իշլար,
Գէտըն դէլըն Ռահար հիւմմաթ էլլասն:

Բանըմ եարըմ, նա բախարսան տալտատան
Սան սան բանըմ դարիբ գեօնկում այլատան,

Բիզայ բիր տաշ դակտի զալում մօլլատան,
Գէտըն դէլըն Ռահար հիւմմաթ էլլասն:

Զօհրա գեօզ եաշինան եաղտի նամանի,
Հախ դալտըրսն արամդտան եամանի,
Ղիամաթայ եա բան օնա, օ մեանի,
Գէտըն դէլըն Ռահար հիւմմաթ էլլասն:

Հ ա յ է բ է ն Ը ա յ Գ .

Կամաց գնացէք, որ ես էլ զամ ընկերներ,
Գնացէք ասէք, թող Ռահարը հոգ տանի.
Այսօրուանից խիստ վատ կերթան մեր գործեր,
Գնացէք ասէք, թող Ռահարը հոգ տանի:

Իմ սիրելի, թնչ ես նայում դու ծածուկ,
Սլտիս մէջը դու տեղ ունիս շատ փափուկ,
Սօլլաներից մի քար զիպաւ մեզ յատուկ,
Գնացէք ասէք, թող Ռահարը հոգ տանի:

Զօհրան արտասուենքով զրեց այս գիրը,
Տէրը վերացնէ այս ցաւերը—խնդիրը,
Մինչ կատարած նա իմս է, ես իրը,
Գնացէք ասէք, թող Ռահարը հոգ տանի:

Ռահար Միրզան եղէգնուտից յուն վերադառնալով, անմիջապէս երկու քաջ կտրիճներ է (ղուլեր) վարձում, հարկաւոր դէպքերում իրան ճառայելու համար:

Միմեանցից անջատուելուց մի քանի օր յետոյ

տոյ, երբ Դահարը մի անգամ տեսնուլ է, որ
ընկերակիցները դպրոցից տուեն են վերադառնում
ու իւր նազելի Զօհրան նրանց մէջ չկայ՝ փրղձ-
կեալ սրտով հետեւեալ մեղամաղձիկ երգն է երգում

Բիրար-բերար գեալտի մահթապ ուշաղի,
Նատան էլլար գեալտի, Զօհրամ գեալմատի,
Ղզլար սիգ սավարսըզ օ ղըպլայ գեահի,
Նատան էլլար գեալտի, Զօհրամ գեալմատի:

Բիր արգա եադէիմ Սուլթանա-խանա,
Հախ էօզի օթուրմիշ ատըլ գիվանա,
Գէօրիմ խարապ օլսուն օ մահթապ խանա,
Նատան էլլար գեալտի, Զօհրամ գեալմատի:

Բիւլբիւլար չըրըշըր գէշտ էլլար բաղի,
Սինամայ չաքըպտըր գիւկիւնի դաղի,
Զօհրա Խան Դահարն չէշմի չըաղի,
Նատան էլլար գեալտի, Զօհրամ գեալմատի:

Հայերէ՛ն Թարգ.

Մի առ մի գալիս են աշակերտները,
Ինչո՞ւ ուրիշն եկաւ, Զօհրաս չի գալիս,
Աղջըկերք թէ սիրէք աղօթարանը,
Ինչո՞ւ ուրիշն եկաւ, Զօհրաս չի գալիս:

Մի խնդրագիր գրեմ Սուլթանին-խանին,
Նրա արդար պատկառելի դիւանին,
Ձը մնայ այն դպրոցի քարը՝ քարին,
Ինչո՞ւ ուրիշն եկաւ, Զօհրաս չի գալիս:

Սոխակները այգուց թռան գնացին,
Սրտումս անբուժելի վէրքեր թողեցին,
Դահար, Զօհրի համար աչքերդ շատ լացին,
Ինչո՞ւ ուրիշն եկաւ, Զօհրաս չի գալիս:

Այսքան արկածալից անցքեր անցնելուց յետոյ,
Դահար Միրզի և Զօհրա խանումի սիրահարա-
կան արկածների համբաւը արեւելքից արեւմուտք,
ամեն տեղ, ամեն երկիր տարածվում է: Իրանց
ընտանեկան և մօտիկ շրջաններում, խօմ գիտէ-
ին ու գիտէին: Բայց դիտմամբ լուում էին ու սպա-
սում հետեւանքին:

Միանգամ մայրը տեսնելով որդու անմխիթար
դուրթիւնն ու նայելով նրա տխուր դէմքին, սըլ-
տապնգելով ասում է. — «Ինչո՞ւ ես այդքան միտք
ու հոգս անում, Դահար ջան, հէնց այսօր պատ-
գամաւորներ կուղարկենք և Զօհրան քեզ հա-
մար հարսնացու կուզենք, դու շատ մի մտածիր
ու քեզ զուր տեղը տանջիր:

Բայց Դահարը շատ լաւ գիտենալով իւր գըլ-
խից անցած արկածների մանրամասնութիւնները,
սրտից մի խոր ախ է քաշում ու արտասուալից
աչքերով հետեւեալ երգը ուղղում մօրը. —

Զանրմ անայ, գեօզըմ անայ,
Անայ, բան դանլար աղլարամ,
Ղարայ բաղըրմ դէօնտի դանայ,
Օն իչուն եանար աղլարամ:

Ֆալակ այրտի էլըմնան,
Սատամ աչտի բէլըմնան,
Սօնալար ուչտի գէօլըմնան,
Բօշ զալտի գէօլլար, աղլարամ:

Բան Գահարամ արթտի զամըմ,
Գայրատայ զարղ օլտի գեամըմ,
Գեալմատի Ձօհրա համ դամըմ,
Օն իչուն եանար աղլարամ:

Հայերէն Քարգ.

Անուշ մայրիկ, սիրուն մայրիկ,
Մայրիկ, արտասուօք եմ լալիս,
Օրս խաւարաւ, անուշիկ,
Ես արիւն աչօք եմ լալիս:

Բաղդը բաժնեց ազգականից,
Խլեց ու տարաւ ինձանից,
Սիրուհիս թռաւ մեր տանից,
Միայնակ—անօք եմ լալիս:

Գահարն եմ դարտըս շատացոււ,
Իմ գրութիւնս վատացաւ,
Ձօհրաս ինձանից հեռացաւ,
Վասն այն ծնկաչօք եմ լալիս:

Անցքը յայտնուելուց ու հրապարակ դուրս-
գալուց յետոյ, մի երեկոյ Գահար Միրզի հօր-
Ահմատ վագիրի տան մէջ ընտանեկան խորհուրդ

է լինում, որ պատուաւոր մարդիկ խնամխօս ու-
ղարկեն Հաթամ Սուլթանի մօտ, օրինական ճա-
նապարհով Ձօհրան—Գահարի հարսնացուն ու
գելու համար: Վերջապէս ընտրվում են մարդիկ,
ի թիւս որոց լինում է և ինքը Ահմատ վագիրը:

Միւսնոյն ժամանակ խորհուրդ են կազմած
լինում նաև Հաթամ Սուլթանի արքունիքում:
Անախորժ գէպքերից սաստիկ վրդոված ու վշտա-
ցած Սուլթանը, հրաման է արձակում, որովհե-
տև նախապէս լսել էր, որ խնամխօս եկող բո-
լոր պատգամաւորներին—առանց խտրութիւն դնե-
լու—անսպալման սրից անցկացնեն—կոտորեն:

Անգիտակ Սուլթանի այս որոշմանը, նոյն
օրը—երեկոյեան յարմար պահուն, խնամխօսները
գիմում են արքունիք: Հէնց դռնից ոտք ներս դնե-
լուն պէս, զինավառած պատրաստի դահիճները
խսկոյն յարձակվում են անգէն պատգամաւորնե-
րի վերայ և սկսում բոլորին կոտորել, բացի
Գահար Միրզայից, որ կենդանի բռնած և թևե-
րը ամրապինդ կապած, ներկայացնում են Սուլ-
թանին:

Սուլթանը տեսնելով Գահար Միրզին, որ-
քան որ սիրում, նոյնքան էլ ատում էր վերջե-
րում պատահած անցքերի պատճառով, վիրաւոր
սառիճի նման մռնչալով հրամայում է, որ իսկոյն և
եթ իւր աչքի առաջ սրախողխող անեն, որ
այլ ևս նրա հօտը չը մնայ աշխարհի երեսին:

Բայց ուր որ չար մարդիկ կան, այնտեղ բարիներ էլ անպակաս են լինում: Պալատական մեծամեծները տեսնելով այս անիրաւ կոտորածը, միջամտում են գործին և Սուլթանի վիրաւորուած սիրտը հանգստացնելով՝ ներումն ստանում Դահար Միրզի համար ու սպանուելուց ազատում:

Վշտածեծ Դահար Միրզան ներումն ստանալուց լետոյ, միտ բերելով հօր ու զուկերի անպարտ մահը և Զօհրա խանուձի սէրը, Սուլթանի և պալատականների ներկայութեամբ իւր սիրան այրող թախիճները հետևեալ երգով է արտայայտում:

Է՛յ աղալար, բու սավտանըն ալըննան,
 Էօզըմ զարդ օլմիշամ, վնյ զարաբախտըմ,
 Էյիպտան բէշ բէթար դարտայ դիւշմիշամ,
 Բուլումազ դարմանըմ, վնյ զարաբախտըմ:

Եխբլտի-ղալմատի գէօնկլումըն բաղի,
 Սովտատան չաքիլմիշ սինամայ դաղի,
 Իստարսըզ տարթէիմ օ աղըր տաղի,
 Հէչ գեալմազ դարտըմայ թայ՝ զարաբախտըմ:

Դահարի վերտ էթտի բու զանլի հիճրան,
 Եխտի մալուլ գեօնկլում, էյլատի բիր զան,
 Զիւնքի բու Ֆանատայ շատ օլմատըմ մեան,
 Դիլա գեալ ջաննաթայ փայ՝ զարաբախտըմ:

Հայերէն Նուր 4.

Ո՛վ պարոնայք, ես այս սիրոյ ձեռիցը,
 Կապուել մնացել եմ, վնյ իմ սև բաղդիս,
 Արգեօք երբ կազատուիմ ես այս բեռիցը,
 Անհնար կացել եմ, վնյ իմ սև բաղդիս:

Իսպառ աւերուել է իմ սրտի այգին,
 Սէրը անջինջ նշան թողել իմ սրտին,
 Կուգէք սարը տեղից շարժեմ հազդին,
 Իմ սիրտս բացել եմ, վնյ իմ սև բաղդիս:

Դահարս նկատեց արիւնոտ վէրքը,
 Խիստ դառը ճաշակեց իւր սիրոյ բերքը,
 Ոտքից գլուխ ցամաքեցան ոսկերքը,
 Այս մասին լացել եմ, վնյ իմ սև բաղդիս.

Հաթամ Սուլթանն այս անգամ սաստիկ չաբանում է նրա վերայ, որ համարձակուեց իւր պալատականների ներկայութեամբ նորից իւր սիրտը վրդովել: Ուստի դահիճներին նորից հրամայում է, որ անմիջապէս գլխատեն այդ յանդուգն երիտասարդին: Բայց պալատականների երկրորդ անգամ միջամտութեան ժամանակ յարմար միջոց գտնելով՝ մի կերպ փախչում ու դարձեալ պատասպարվում է նախկին եղէգնուտում: Այս անգամ դժուար էր Սուլթանի սիրտը հանգստացնել. ուստի հրամայում է որ ամեն կողմ խուզարկու խնդրակներ ուղարկեն և ուր էլ որ լի-

նի, անպատճառ գտնեն ու ներկայացնեն իրանս
 Խնդրակներն այս հրամանն ստանալուն պէս,
 որսորդի շան նման ընկնում են քոշա-պուճախ և
 որոնում: Վերջապէս հոտառու որսկանները մըտ-
 նումեն եղէգնուտի մէջ և գտնելով նրան խոտերի
 տակ ծածկուած, բռնում տանում ներկայացնում
 են Սուլթանին:

Դալի ղուլը, որ Դահարի ամենահաւատարիմնե-
 րից մէկն էր, թէ այնտեղ և թէ ճանապարհին,
 թէպէտ և շատ էլ գիմադրում ու ընդիմանում է,
 սակայն ոչ մի հնար չի գտնում այդ անմեղ
 զոհին-Դահարին նրանց ձեռքից նորից ազատե-
 լու. որովհետեւ խուզարկուները թէ բազմաթիւ
 և թէ քաջ տղամարդիք են լինում:

Կրկին անգամ ձերբակալուելուց յետոյ, Դա-
 հար Միրզի սիրտը տրոփում է . . . ինքն իրան-
 մտածում է թէ՛ ինչո՞ւ մարդիկ չեն մտնում սի-
 րոյ սահմանի մէջ ու իրանցից ձեռք վերցնում:
 Այս մտածութեամբ ճանապարհին գնալիս, յան-
 կարծ իւր սպանուած հայրն ու ղուլերը միտքն
 ընկնելով, նա վրդոված սրտով սկսում է երգել:

Ահմատ Մահամմատըմ էօլտի,
 Օլսայտըմ էօզըմ, աղլարամ,
 Տահի բիր քիմսանըմ եօխտուր,
 Բու գուլում բիզըմ, աղլարամ:

Գեօնուլ ղալ գիւման իչընտայ,
 Ջալսաա թիթրար ջան իչընտայ,
 Աղ բատանլար ղան իչընտայ,
 Գէօկեարամ գիզըմ, աղլարամ:

Դահար Միրզայ օթայ եանտի,
 Յալակն գեարտուշի դէօնտի,
 Հաթամըն չրասի սէօնտի,
 Քեօռ օլսուն գեօզըմ, աղլարամ:

Հայերէն Քարգ.

Ահմատս ու Մահմատս մեռան,
 Ես նրանց համար եմ լալիս,
 Օգնողներս զոյգ զոյգ թռան,
 Ես նրանց համար եմ լալիս:

Միրտս յոյսերի մէջ մնաց.
 Հոգիս ինձնից թռաւ գնաց,
 Թիկունքներն արիւնով ներկուած,
 Ես նրանց համար եմ լալիս:

Դահար Միրզայ վառի, այրի,
 Բախտը քեզ խփել է քարի,
 Հաթամի մուխն էլ կը մարի,
 Ես նրանց համար եմ լալիս:

Երբ Դահար Միրզին ներկայացնում են Սուլ-
 թանին, չարանում է, սպառնում ու հրամա-
 յում, որ անմիջապէս զլխատեն: Ներկայ գըտ-

նուսդ պալատականները նորից միջամտում են գործին ու Սուլթանին հասկացնում, որ իրանց երկու տան միակ սիւնն ու խարիսխը, մանաւանդ թէ իւր գահի ապագայ միակ ժառանգը Դահար Միրզան է, էթէ նրան սպանել տայ, այնուհետեւ էլ ինչով կամ ո՛ւմնով պէտքէ մխիթարուի: Չէ որ, ասում են, «ելնի սիրտ՝ կտրէ գլուխ, իջնի սիրտ՝ չը գըտնի գլուխ»: Այսպիսի մեղկ ու փափուկ խօսքերով այս անգամ էլ Սուլթանից ներումն են ստանում Դահար Միրզի համար:

Բայց դեռ պալատից չը հեռացած, Դահար Միրզան խնդրում է Սուլթանից, որ թեւերն արձակեն ու մի սազ տան իրան. որովհետեւ «մի քանի խօսք էլ ունիմ ասելու» ասում է և կրկին ու կրկին թախանձում:

Այս առաջարկութեանը Սուլթանն համաձայնում է միայն այն պայմանով, որ նրա ասացուածքի մէջ Ձօհրա անունը երբէք չը լիշատակուի:

Դահարը համաձայնում է այս պայմանին: Այնուհետեւ թեւերն արձակ Դահարը, նախըջի սազը գէմ է անում կուրծքին ու սիրահարներին յատուկ ոգևորութեամբ ու աշխուժով գլուխը այս ու այն կողմ երեւցնելով, կիսախուփ աչքերը գէպի վեր տնկած, սկսում է կտնտոցը (թազանէն) խփել սազի սիմերին ու երգել. —

Ալ բէանըմտըր աթակ սանըն եաղըմբիլ,
Գեալ ուզմայ դաստըմնան դաման, Սուլթանըմ,

Սան օլտուրտուն աթամինան ղուլարըմ,
Քիփըիկէ էօխ, զաշի քեաման, Սուլթանըմ:

Արամգտայ իւզ բին խաֆ սօլլիան,
Խանչալ ալըբ զարա բաղըրըմ թէլլիան,
Եարի բանտան, բանի եարտան էլլիան,
Եամանայ օղրասն եաման, Սուլթանըմ:

Դահար Միրզայ ղէլլար բանըմ ատըմայ,
Ղալմիշամ դամանտայ, եթըշ իմտատըմայ,
Օ զաման քի Ձօհրա դիւշար եատըմայ,
Թար չխար թափամնան դուման, Սուլթանըմ:

Հայերէն լարգ.

Ձեռքս փէշն եմ քցել զօրեղ իշխանիս,
Ինձ օգնութեան հասիր, հզօր Սուլթանս,
Սպանեցիր հօրըս ու ծառաներիս,
Ինձի խնամք արա այսօր, Սուլթանս:

Մէջներս հազար մի ստեր խօսեցին,
Դաշոյն առած միջնաթելս կտրեցին,
Ինձ սիրուհուց բաժանելու երգուեցին,
Անողին հանդիպի վատ օր, Սուլթանս

Դահար Միրզայ կասեն իմ իսկ անունս,
Օգնութեան ձեռք մեկնէ, մի կտրեր քունս,
Երբոր միտս է գալիս Ձօհրա խանումս,
Չքանում է ցաւս այն օր, Սուլթանս:

Չօհրա անուներ լիշելուն պէս. Սուլթանը նորից կատաղում ու գոռում է — «դահիճ, կորէ այդ ստահակի գլուխը»:

Նստող պալատականները դարձեալ միջամտում են և Գահար Միրզին—սիրտդ ուզածի նման— հրապարակաւ մի եղոտ նախատինք կարգալով՝ սկսում վշտացած Սուլթանին հազար ու մի աղաչանք—պաղատանքով հազիւ հազ հանգստացնել: Բայց սիրող սրտի համար այդ խօսքերը թէ քարին ասած, թէ նրան, մի և նորին է. կամ թէ այս արիւնահոս անցքերն էլ կարծես մի տեսակ խաղ է: Ամեն ինչ մոռացած Գահար Միրզան, ոչ Սուլթանի սպառնալիքներին ու հրամաններին և ոչ էլ իւր կեանքի ու գոյութեան մասին միջնորդողների խօսքերին է ուշադրութիւն դարձնում: Նրա գլխի մէջ միայն իւր սիրոյ առարկան—Չօհրա խանումն է պտտում, որին մի ըոպէ անգամ չէր կարող մոռացութեան տալ: Աւստի առանց ականջ դնելու մէկի կամ միւսի խօսքին, նորից սազը ձեռքն է առնում ու երգում հետեւեալ երգը—

Ազալ բաշտան բաղատիլար զօլումի,
Մատաթ Ալլահ, մատաթ, սան իմտատ էլլա,
Հախտա դապուլ էթմազ բէլլա գուլումի,
Մատաթ Ալլահ, մատաթ, սան իմտատ էլլա:

Օլտուրտիլար Ահմատինան Մահամմատ,
Ինսանտայ դալմամիշ իրաղաթ մօհպաթ,

Չալում զուլլար, ալ սախէին բիր սահաթ,
Մատաթ Ալլահ, մատաթ, սան իմտատ էլլա:

Ղանլի դարայ դեօրա եանըմզ բուրուպտուր,
Շահլար շահի իւստումըզայ տուրուպտուր,
Ենկի բիլտըմ Ահմատ վազիր օլուպտուր,
Մատաթ Ալլահ, մատաթ, սան իմտատ էլլա:

Գահար Միրզայ գէլընըպտըր ալլարի,
Գիմսամ եօխտուր խապար ալսամ հալլարի,
Գեօզ էօկիւնտայ օլտուրտիլար զուլլարի,
Մատաթ Ալլահ, մատաթ, սան իմտատ էլլա:

Հայերէն լարգ.

Սկզբում պինդ կապոտեցին ձեռներս,
Ո՛վ Տէր Աստուած, ո՛վ Տէր, օգնական եղիր.
Մի ընդունիր վերաս բարձած բեռներս,
Ո՛վ Տէր Աստուած, ո՛վ Տէր, օգնական եղիր:

Սպանեցին Ահմատին ու Մահմատին,
Մարգիք չը լսեցին մեր սուրբ հաւատին,
Չսր ծառաներ, պահէք ինձ պէս անհատին,
Ո՛վ Տէր Աստուած, ո՛վ Տէր, օգնական եղիր:

Պարմիր արիւնն բոլորներս առել է,
Շահնշահ սուլթանը մեզ իսկ վառել է,
Ուշ գիտցայ որ Ահմատ վազիրն մեռել է,
Ո՛վ Տէր Աստուած, ո՛վ Տէր, օգնական եղիր:

Գահար Միրզայ, ալ ու կարմիր է հագեղ,
 Չկայ մէկը որ մխիթարէ հոգեղ,
 Աչքիդ առաջ սպանին ծառաներիդ,
 Ո՛վ Տէր Աստուած, ո՛վ Տէր, օգնական եղիր:

Երգն աւարտելուց յետոյ, երբ տեսնում է որ իւր ասածները գնահատող ու նրանց վերայ միտք դարձնող չկայ, լակամայից խոնարհ գլուխ տալով դուրս է գալիս արքունիքից՝ ու երբ Ձօհրա խանումի սենեակների մօտից պիտի անցնէր, տեսնում է որ լուսամուտները բաց են և իւր սիրոյ հրեշտակ Ձօհրան սենեկի մի անկիւնում կանգնած, աչքի տակով իրան է նայում: Անցեալը միտ բերելով, նորից սիրտը բորբոքվում է և ուղիղ կանգնելով լուսամուտի հանդէպ, սկսում սրտաշարժ կերպով երգել այս երգը—

Բան գիտանտայ սանի քիմայ թափշուրիմ,
 Աղլիա-աղլիա՝ ղալ ինտան բէլա,
 Նա մօհթատր՝ ամանաթն բանտառըր,
 Վէրիմ ամանաթն ալ ինտան բէլա:

Փալաք գիւնըմըզի էլլատի ղարա,
 Տահի բու դարտըմայ բուլումազ չարա,
 Մօլլայա, ախունտայ, օխուճիլարա,
 Աղլայ, սղլայ, աչտըր ֆալ ինտան բէլա:

Գահար Միրզայ էլտան դիւշտի բիր քեանար,
 Սան աղուբաթ էլտա ջան ալմազ ղարար,

Աղլամաղ—սղլամաղ նա վէճայ եարար,
 Բանի աշք օտունայ սալ ինտան բէլա:

Հայերէն լատի.

Ես գնալիս արդեօք քեցի ո՛ւմ յանձնեմ,
 Լաց եղիր, ողբալով կաց այսուհետև,
 Շատ մի հոգար, պահուստդ քեզ կը յանձնեմ,
 Գրկին ստանալով, կաց այսուհետև:

Բաղդը մեր դառ օրերը սևացրեց,
 Ճակտիգիրը միմեանցից հեռացրեց,
 Կարգացող մեծերին մեր գէմ գրգռեց,
 Տխուր-հոգս անելով, կաց այսուհետև:

Գահար Միրզան գնում է հայրենիքից,
 Օտարութեան մէջը պիտի վառի կրակից,
 Լաց ու ողբով չի ազատուի այս ցաւից,
 Միրոյ մէջ վառուելով, կաց այսուհետև:

Սիրահարները թէպէտ և միմեանցից բաժան ու հեռու էին ապրում, բայց երբեմնապէս պատեհ առիթ ու յարմար միջոց դարձեալ գտնում էին մէկը միւսին տեսնելու: Այս բանը շատ լաւ յայտնի էր Հաթամ Սուլթանին, որովհետև նրա ծածուկ լրտես կարգած ներքինի մատնիչ Արապը, ամեն բան գաղտնի լրտեսելով, մի առ մի իրան տեղեկացնում էր:

Վերջապէս Սուլթանն ինքն իրան երկար

մտածելուց յետոյ, այն եզրակացութեանն է գալիս, որ Պահար Միրզին սպանել անկարելի է, որովհետեւ իւր մեծամեծներից նրա կեանքը պաշտպանողներ և նրա համար միջնորդողներ շատ կան. ուրեմն միակ միջոցը մնում է նրան հայրենիքից օտարադրել—աքսորել, որպէս զի պանդխտութեան մէջ Զօհրա խանումի սիրով տոչորուի և սրտի սաստիկ վշտից կաթուածահար լինի մեռնի ու ոչնչանայ:

Այս նպատակաւ հրաման է արձակում, որ Պահար Միրզին, առանց ժամանակ տալու, հայրենիքից անդարձ աքսորեն Մէրաին քաղաքը:

Գուժաբեր լուրը Պահար Միրզի ակառօնին հասնելով, մտածում է այդ աքսորի առաջն առնելու համար մի ելք գտնել: Առանց երկար մտածելու, որոշում է անձամբ ներկայանալ հօրեղբայր Սուլթանին և իւր հօր անպարտ մահը լիշեւով ու թախանձելով, գուցէ հնար լինի նրա դաժան սիրտը փափկացնել ու իւր այդ չար նպատակից լետ կացնել: Ուստի առանց ժամանակ կորցնելու գիծում է պալատ, ուր Սուլթանին շրջապատել էին իւր մեծամեծները, և նրանից իրաւունք է խնդրում մի խոնարհ աղերս առաջարկելու:

Սուլթանը որքան էլ չուզէր լսել նրա խնդիրը, բայց ի պատիւ իւր շրջապատող աւագանւոյն գիջանում է և հրամայում խօսել:

Պահար Միրզան ըստ իւր սովորութեան, օտ-

զը՝ որ իւր անբաժան ընկերն էր, առնում է ձեռքն ու ոգևորուած սկսում երգել.—

Բաշ զալտրըբ սանի դէլին գեալմիշամ,
Թախսիրըմ եօխ,եօխ գիւնահըմ, խան ամի,
Բան սանի գեանտըմայ խանդար բիլմիշամ,
Սան բաղշլայ դէճ գիւնահըմ, խան ամի:

Դարեայ քեանարընտայ օլուր ատալար,
Ել վուրանտայ սիայ զիլֆի սատալար,
Մահթապ ուշաղլարի, իմամ զատալար,
Օնլար գեալմիշ ինթիմասայ, խան ամի:

Եավրի քեաքլիկ քիմի սասայ գեալլպտըր,
Ղօնշուսի զալտրըբ՝ եասայ գեալլպտըր,
Զօհրա խանում ինթիմասայ գեալլպտըր,
Ինթիմասի զապուլ էլլա, խան ամի:

Զալում ջանլաթ, նա սուսանտն զանըմայ,
Գէտըն դէլըն եարըմ գեալսն եանըմայ,
Բիր օտ սալտն Պահար Միրզայ ջանընայ,
Ելլարա թախ եանաձախտըր, խան ամի:

Հայերէն Քարգ.

Գլուխս առած քեզ լիշեւով եկել եմ,
Հաւատացիր որ մեղք չունիմ, խան ամի,
Ես քեզ ինձ տէր ճանաչելով եկել եմ,
Ինձի ներիր, ես մեղք չունիմ, խան ամի:

Ծովերի մէջ կղզիներ շատ են լինում,
 Հողմի առաջ սև ծամերը փողփողում,
 Դպրոցում դենպետի որդիքն են կարգում,
 Նրանց լսէ, ես մեղք չունիմ, խան ամի:

Կաքաւի ձագի պէս վազում է ձայնի.
 Զինավառուած թշնամու դէմ կը կայնի.
 Զոհրա խանումն խնդրուածքի է գալի,
 Խնդիրը ան, ես մեղք չունիմ, խան ամի:

Անխիղճ դահիճ, ինչ ծարաւ ես արեանս,
 Սիրուհիս դնա բեր, մի խլեր կեանս,
 Ես Դահարն եմ, կրակ է ընկել ջանս,
 Միշտ այրում է, ես մեղք չունիմ, խան ամի:

Որքան էլ Դահար Միրզի խնդրուածքն ու
 առաջարկութիւնը սրտաշարժ ու արգարացի է
 լինում, այնու ամենայնիւ Հաթամ Սուլթանը
 մնում է անողոք ու հաստատուն իւր տուած
 վճռի ու որոշման վերայ, և իւր ծառաներին
 հրամայում, որ առանց ժամանակ կորցնելու
 հայրենիքից հեռացնեն:

Դահար Միրզան տեսնելով, որ իւր խնդիրը
 հորեղբոր կողմից անլսելի մնաց, լակամայից
 հնազանդվում է նրա հրամանին: Բայց որպէս
 զի մի կերպ վրէժ լուծէ նրանից ու այնպէս
 հեռանայ, կրկին դիմում է նրան և խնդրում,
 որ իրաւունք տայ իրան մի քանի խօսք ևս

ասել ու այնպէս հեռանալ—գնալ, ուր որ
 մեծագոր Սուլթանը որոշել է իւր համար: Սուլ-
 թանը տեսնելով որ իւր նպատակին արդէն մա-
 սամբ հասաւ, հրամայում է որ խօսի, բայց
 ոչ թէ նորից խնդիր արծարծէ հայրենիքում
 մնալու համար:

Դաշար Միրզան համաձայնում է և սազը ձեռ-
 քըն առնելով, նրան վերաւորելու համար, հետե-
 տալ համարձակ ու լանդուզն երգը երգում.--

Միւխաննաթն քեօփրուսըննան գէջմամ, Ալլահ
 քեարիմտր,

Բիւզ չավուրուբ զաբըսննան գէջմամ, Ալլահ
 քեարիմտր,

Նամարտ բանի թաքլիֆ էթսայ եմանամ չօ-
 րակընի,

Սուի-ապի քեավսար օլսայ իջմամ, Ալլահ քեա-
 ըիմտր:

Չաղըրըրամ Փարհատըմի Ալի շահի մարտ իլայ,
 Օլմամ զարտաշ, օլմամ սուտաշ, օլմամ հար
 նամարտ իլայ,

Իստարսան քի մարտ օլա սան, գիր մէյ-
 տանայ մարտ իլայ,

Հար միւխաննաթըն զարշընտան զաջմամ,
 Ալլահ քեարիմտր:

Բան Դահարամ զան աղլարամ, ամըմ օլ-
 տուրտի աթամ,

Խանչալ ալբը դարալ բաղբըմ գիշմամ, Ալլահ
 քեարիմտոր,
 Բու մէլտանա չաղըրըրամ, ես շահի մարտա-
 նալար,
 Ղուլլարըմըն բիւնհան դարալ աչմամ, Ալ-
 լահ քեարիմտոր:

Հայերէն լարգ.

Եր կչոտների կամուրջիցը բնաւ անցնել չեմ
ուզում,

Նախանձ մարդկերանց դռնիցը բնաւ անց-
նել չեմ ուզում,

Թէ ժլատը իւր սեղանից ինձի կերակրել ցանկալ,
Նրա մեղրախառ հացիցը բնաւ կտրել չեմ
ուզում:

Ես ինձ օգնութեան կը կանչեմ անվեհեր
կտրիճներին

Չեմ լինի եղբայր, սրտակից այն փոքրոգի մե-
ծերին,

Ով կը ցանկալ լաւ համբաւի, պէտքէ միշտ
գործէ բարին,

Թուլամորթների առջևից բնաւ փախչել չեմ
ուզում:

Ես Գահարն եմ, արիւն կուլամ, դառն կանց-
նի իմ օրս,

Յօրեղբայրս անխղճաբար սպանել տուեց հօրս,
Թէկուզ մաս մաս կտրատել տայ, նա և իմ
թշուառ մօրս,

Ծառաններիս լիշատակից բնաւ անցնել չեմ
ուզում:

Այս վերաւորանքը Սուլթանի համար անմար-
սելի լինելով, իսկոյն կրկնում է հրամանը, որ
աճապարանօք իւր աչքից հեռացնեն:

Չարտխնդաց դահիճներն որ պատրաստի կանգ-
նած հրամանի էին սպասում, անմիջապէս պա-
լատից դուրս են հանում ու վարում գէպի աք-
սորավայրը:

Այդ միջոցին Չահրա խանումը լուսամուտի
մօտ կանգնած սպասելիս է եղել, ոչ վերջին
մնաս բարեաւն ասէ իւր սրտի սիրական Գահար
Միրզային:

Գահար Միրզան տեսնելով որ իւր սրտակից
Չահրան իրան է սպասում. կանգնում է լուսա-
մուտի հանդէպ ու սազը քօքելով երգում հետևե-
ալ սրտաճմլիկ երգը, որին մի և նոյն ժամա-
նակ երգով պատասխանում է Չահրա խանումը. —

Գահար Միրզայ

Սանըն աթամ բանի սիւրկիւն բուլուրտի,
Գեաթրմասն աղաճլարի բար երի,
Իսնաթ իչուն այրըթտըլար գիւլումնան,
Ղըզըլ գիւլ չափրասի ալախար երի:

Չահրա խանում

Մանըմ աթամ էօզ աթանդի օլտուրտի,
Ալագեօզլի խան Գահարըմ վար երի,

Բիւլբիւլ խալաթ այլըթտըլար գիւլումնան,
Ղօյմայ գիւլ չավրասի ալախար երի:

Գահար Մերչայ

Ամըմ երտան գեօկայ էլլատի զուլում,
Գարտըմըն դարմանի ման նէլտայ բուլում,
Համ աթամ օլտուրտի, նավ ջիվան զուլում,
Ինսանտայ դարմամիշ էհթիպար երի:

Ջօհրա խանում

Գեօրուն դահպա ֆալակ նալար դայըրտի,
Ջապը էլլատի ջանանըմնան այըրտի,
Գօստլարըմ աղլատի, գիւշմանըմ գիւլտի,
Գեօնկլումայ սալըպտըր դամ խապար երի:

Գահար Մերչայ

Ղօլի բաղլի գեաթրտիլար գիվանայ,
Նավ ջիվան զուլլարի բուլանտի դանայ,
Գահար աղլար Ջօհրա թաքի ջիվանայ,
Բան օլանտայ էլլար սարասար երի:

Ջօհրա խանում

Եայլուղըմի սանայ նիշան ափարսըն,
Նէչայ սընըղ գեօնուլլարի եափարսըն,
Սան գէտարսըն օլքեալարտան թափարսըն,
Գէ ղօյ Ջօհրա չաքսըն ահիզար երի:

Հայերէն թարգ.

Գահար Մերչայ

Քու Հայրդ ինձի անմեղ տեղը աքսորեց,
Ձեն բերում ծառները պտուղ ու ծաղիկ,
Առ նախանձու ինձ իմ վարդից բաժանեց,
Կարմիր վարդի սիրոյն եղայ խաղալիք:

Ջօհրա խանում

Իմ Հայրս միմիայն քո Հօրն սպանեց,
Խաժաչեայ խան Գահար կաց դու խաղաղիկ:
Նախանձը սոխակին վարդից բաժանեց,
Կարմիր վարդին դու միշտ սիրէ, անուշիկ:

Գահար Մերչայ

Հօրեղբայրս ինձ երկնուց գետին քցեց,
Ցաւերիս զեղ դարման բնաւ չը թողեց,
Հօրս ու ծառաներիս մէկ տեղ սպանեց,
Մարդկանց մէջը մեծ էր, բայց եղաւ փոքրիկ:

Ջօհրա խանում

Տեսէք նախանձ բաղդը ինչեր է շինում,
Ջանք է անում սրտակիցները բաժնում,
Բարեկամը տխրում, թշնամին խնդում,
Սրտումս քցեցիր դու ցաւ, քնքուշիկ:

Գահար Մերչայ

Թւե՛րս կապ բերեցին գիվանատուն,
Կտրիճ ծառաներիս պատել էր արուն,

Ձօհրի համար ես Դահարս օրն ի բուն,
Լաց եմ լինում այս աշխարհում վաղանցիկ:

Ձօհրա խանութ

Թաշկինակս թող քեզի նշան լինի,
Կոտրատուած սրտերին ամբարտակ շինի,
Դու զնում ես, մի օր դարձեալ էնձ լիշի,
Բայց թող Ձօհրան ցաւդ քաշէ, սիրունիկ:

Երբ սիրահարները երգը վերջացնում են և ուզում էին մի վերջին անգամ էլ միմեանց հետ համբուրուել ու ողջագուրուել, անխիղճ դահիճները իսկոյն Դահար Միրզին լափշտակում ու անլստանում են Ձօհրա խանութի աչքից: Խեղճ Ձօհրան այս վայրենի արարմունքը տեսնելով՝ կանգնած տեղը մնում է սառած և չի իմանում թէ ինչ անցք էր, որ այդ րոպէին անցաւ իւր գլխով: Երկար ժամանակ այդ ապուշ դրութեան մէջ մնալուց լետոյ, ինքն իրան ուշքի է դալիս և քաշուելով իւր ապարանքի ներքին սենեակներէից մէկի մէջ՝ սկսում դառնապէս լաց լինել իւր սիրահարի լանկարծական անգարձ կորուստի վերայ:

Թող Ձօհրա խանութը իւր ցաւերը լայ ու ողբայ, իսկ մենք տեսնենք թէ դահիճներն ուր տարան կամ ինչ արին, ողորմելի Դահար Միրզին: Նրանք Սուլթանի կողմից ծածուկ պատուէր

ու հրաման ունէին, որ քաղաքից հեռացնելով մի անապատ— անմարդաբնակ տեղում Դահարին սպանեն և նրա արիւնոտ շապիկը ներկայացնեն իրան: Բայց բարեբաղդաբար նրա հրամանն այս անգամ չի կատարվում, որովհետեւ դահիճները Դահար Միրզի կողմից առատօրէն վարձատրուելով կաշառուելով ձեռնամուխ չեն լինում նրա անձին, այլ միայն հագի շապիկը առնելով՝ թաթախում են ուլի արեան մէջ ու բերում ներկայացնում արիւնածարաւ Սուլթանին:

Սուլթանն այսքանով գոհ է մնում և հաւատարմով իւր անհաւատարիմ դահիճներին՝ բողորովին միամտում է:

Այժմ տեսնենք սիրոյ գերի Դահար Միրզան ո՞ւր զնաց— ինչ եղաւ:

Երբ դահիճներն իրանց պարտքը կատարած համարելով պիտի վերադառնային տուն, սիրոյ ծարաւ Դահար Միրզան մի նամակ է գրում, նրանց ձեռքով հասցնելու Ձօհրա խանութին, որ անձամբ տայ Հաթամ Սուլթանին: Բայց որպէս զի իրանց գաղտնիքը Սուլթանի մօտ չը բացուի, դահիճներն այդ կնքուած ծրարը բերում տալիս են Ձօհրա խանութին ու իրանք իսկոյն անլստանում, որ պալատական լրտեսներից ոչ ոք իրանց նկատող չը լինի:

Ձօհրա խանութը իսկոյն Սուլթանի հասցէին գրած ծրարը բաց է անում, որ իւր մէջ պարու-

Նակում էր հետեւեալ աղերսարկու երգը.—

Բիր նամա եազէիմ ատալաթ շահա,
Ալ ալըննան օխի բու նամանի սան,
Բան սանըն ղուլընամ քեամինա քեանթար:
Բօյնուամայ ղօյուպսան բուտա մեանի սան:

Ղըսմաթ օլսուեն եթում հախայ ղիտարայ,
Մանայ գեօթուր դօստ ղիլիֆն դէտարայ,
Թախսիրըմ վար չաղ ղափընտայ դէ տարայ,
Ղամ ղայինան էօզըմ բուտա մանի սան:

Հէչ աքսըլմազ բու սարըմն դումանի,
Դէօնտի չարխի Փալակ ալտիտա մանի,
Չաղըր, Դահար Միրզայ, սահապ ղամանի,
Սըթխինան տութկինան բու դամանի սան:

Հ * յ է ր է ն Բ * ր 4.

Մի խնդրագիր գրեմ անուանի շահին,
Որ կարգայ իմանայ այս իմ դրուածքը.
Ես նուաստ ծառան եմ իմ տէր արքային,
Գուցէ թէ չը մերթէ իմ խնդրուածքը:

Հարուստի ու որբի իսկ տէրը նա է,
Անբաղդին, թշուառին նա կեանք կընծայէ,
Մեղապարտին ներելով կը խնայէ,
Չուր չի անցնիլ խնդրողի պաղատանքը:

Բնաւ չի վերանայ ամպը գլխիցս,
Բաղդը անդարձ գնաց կորաւ մօտիցս,

Կանչեմ Դահար Միրզաս խորը սրտիցս,
Որ մեծ Տէրը լսէ իմ աղաչանքը:

Երբ այս սրտաշարժ գիրը կարդում, աւարտում է, դառնում է դէպի դահիճները, որ իրանից բաւականին հեռու կանգնած նայում էին ու իւր գիսակներից մէկը սազի տեղ գործածելով՝ զգածուած սրտով երգում է.—

Աչք ալընտան գեալան նավ ջիվան ղուլլար,
Չալում ղուլլար, խան Դահարի նէյնատըզ,
Գեօրիմ լալ օլայտի բու շիրին դիլլար,
Չալում ղուլլար, խան Դահարի նէյնատըզ:

Ղուլլար, բախըն ապրուլարըմ անգ մի տըր,
Եարաբ երի եսպան մի տըր, տանգ մի տըր,
Խան Դահարի օլտուրոնպսըզ, սանգ մի տըր,
Չալում ղուլլար, խան Դահարի նէյնատըզ:

Բան Չօհրայամ, բու դարտ մանի արըթտըր,
Չէչմըմ եաշի ղակիրմանլար երըթտըր,
Ախար Դահար դարտի բանի չուրըթտըր,
Չալում ղուլլար, խան Դահարի նէյնատըզ:

Հ * յ է ր է ն Բ * ր 4.

Հողեհանիս մօտից եկող կտրիճներ,
Չար ծառաներ, խան Դահարին քնչ արիք:
Տեսնեմ որ ձեր լեզուն մնայ պասպանաւած,
Չար ծառաներ, խան Դահարին քնչ արիք:

Կտրիճներ, ասացեք, ինձ հոգեհան միք անի,
 Տարած տեղը անպէտք է, թէ պիտանի,
 Խան Գահարը մեռած է, թէ կենդանի,
 Չար ծառաներ, խան Գահարին ինչ արիք:

Ես Ջոհրան եմ, այս ցաւը ինձի մաշեց,
 Աչքիս արտասուենքը սրտիկս խաշեց,
 Գահարի սէրը լերդս թոքս տաշեց,
 Չար ծառաներ, խան Գահարին ինչ արիք:

Երգն աւարտելուց լետոյ, դահիճներն ան-
 յայտանում են, իսկ ինքն ընկնում է խոր մտա-
 ծուծեան մէջ ու տապակվում:

Սակայն քնքոյշ մեծացած Գահար Միրզան
 որ բնաւ չը գիտէր թէ օտարութիւնն ինչ բան
 է և ինչ ասել է առանձնութիւն անապատի և
 լեռների ու ձորերի մէջ, այժմ իւր քօռ բաղ-
 զից, այդ վիճակին էր հասած: Որ կողմն էլ որ
 նայում է, բացի իրանից էլ ոչ ոքի չէ տեսնում:
 Մօտը ոչ ոք չկար, որ հետը խօսէր-խորհրդածէր,
 կամ թէ լաւ ու վատ մի կերպ մխիթարէր: Ամա-
 յութիւնն ու առանձնակեցութիւնը այն աստի-
 ճան ազգում են նրա սրտի վերայ, որ այլևս չի
 կարողանում համբերել՝ սկսում է լաց լինել, և
 իւր անշունչ ընկերը-սաղը ձեռքն առնելով լա-
 լահառաջ այսպէս սկսում նուագել ու երգել.—

Չիւնքի վաթանըմնան օլտում դարբէգար,
 Եատըմայ դիւշուպտուր էլլար, աղլարամ,

Ղըւլտիլար զօվում զարտաշ, նա քի վար,
 Ախտի, չէչմըմ եաշի սէլլար, աղլարամ:

Չաղըրըրամ դարիբ թաքի խօրասան,
 Ալընտոյ զիլֆիխար, եա շահի մարտան,
 Բու եօլլարըն հանկիսընայ վարիմ ման,
 Բանայ իքի օլտի եօլլար, աղլարամ:

Չէչ դէմազլար Գահար-Միրզայ նա օլուբտուր,
 Սարըլմիշտըր, զիւլ բանկըմ սօլուպտուր,
 Ջօհրայ խանում գեօզի եաշլի զալուպտուր,
 Փէրուշան դիւշուպտուր թէլլար, աղլարամ:

Հայերէն լարգ.

Հայրենիքից հեռու ընկայ տարագիր,
 Տես ու ճանանչ միտքս եկան, լալիս եմ,
 Կոտորեցին քոյր ու եղբայր, ամեն իր,
 Միրտս ու հօգիս իսպառ բեկան, լալիս եմ:

Օտարի պէս ձայն եմ տալիս, ողբում եմ,
 Հաւլուն թուրը ձեռքս առած կովում եմ,
 Չը գիտեմ թէ, ես որ ճամբով գնումեմ,
 Ճանապարհս երկուս եղան, լալիս եմ:

Ասող չկայ Գահար Միրզան ինչ եղաւ,
 Գունատուելով իր կարմիր գոյնը թռաւ,
 Ջօհրան արտասուալի աչքերով կացաւ,
 Իւր խօսքերը միտքս ընկան, լալիս եմ:

Լացն ու հառաչանքն էլ չեն օգնում տարաբազդ Գահար-Միրզային: Վերջապէս ինքն իրան մտածում է թէ, պէտքէ այս անտանելի դրութիւնից մի կերպ դուրս գալ: Նստած տեղից վեր է կենում ու սկսում առաջին հանդիպող ճանապարհով առաջ գնալ:

Թէ քսնի օր ճանապարհ է գնում, թնչեր են նորան պատահում, թնչ անցքեր անցնում նրա գլխով, այս մասին ոչինչ չենք կարող ասել. միայն այսքանը գիտենք, որ ճանապարհը շարունակելով, մի օր էլ գնում հասնում է Մէրտին քաղաքը, իւր համար որոշուած աքսորավայրը ու մտնում Խանվերտի Բագիրկեանի բաղը և նստում սալվի ծառի (չինար աղածի) տակը, որ շատրուանի մօտն էր տնկած ու հանգստանում:

Փափկակեաց Գահար Միրզան հետիոտ երկար ու անսովոր ճանապարհ գնալով արևակէց էր եղել ու թմրել, մի կողմից էլ քաղցն ու ծարաւն էին իրանց ազդեցութիւնը թողել նրա խոնջացած անգամների վերայ: Այդ պատճառով էլ հէնց որ ծառի հովանու տակ նստում է թէ չէ, մի տեսակ խոր մրափ վերան գալով, քաղցր քնում է:

Այդ միջոցին Խանվերտի Բագիրկեանը քնից նոր վերկացած լինելով, իւր միակ դստերն ուղարկում է շատրուանից սառը ջուր բերելու, որ լուացուի:

Աղջիկը երբ սափորը ձեռին հասնում է շատ-

րուանի մօտ, որ ջուր պէտքէ լցնէր, յանկարծ աչքն ընկնում է չինար աղածուն, տեսնում է որ մի լուսատիպ հրեշտակ պարկել—քնել է նրա տակին: Հրապուրուած այդ գեղեցկութիւնից, աղջիկը ամեն ինչ մոռանում է ու կանգնած տեղը անշարժ կացած՝ ապուշ մընում . . . :

Շատ էր քնել թէ քիչ՝ այդ միայն Աստուած գիտէ. Գահար Միրզան քնից յանկարծ դարձնում է ու տեսնում, որ մի աղջիկ շատրուանի մօտ սափորը ձեռին կանգնած, անթարթ իրան է նայում: Իսկոյն միտքն ընկնելով հայրենիքն ու իւր անուշ Զօհրան, սիրան ուռչում է և բաղդից գանգատելով երգում.—

Ջիտայ գիւշտում վաթանըմնան,
Ղան աղլար էլլարըմ մանըմ,
Բիւլբիւլ իսպաթ գիւլուշաննան,
Բօշ զալտի տալլարըմ մանըմ:

Ղահպա Փալակ սանտան օլտի,
Սարալտի գիւլ բանկզըմ սօլտի,
Սաղըմտայ սօլըմտա էօլտի,
Նալ ջիվան դուլլարըմ մանըմ:

Ջահիլամ էօմըմ սօքիւլտի,
Աղըր էլլարըմ չեաքիւլտի,
Ջանասըզ իւզայ թօքիւլտի,
Փէրուշան թէլլարըմ մանըմ:

Գահար Միրզայ բու չաղնտայ,
 Սինասի Զօհրա գաղնտայ,
 Ղալտի հավուզ այաղընտայ,
 Սօնալի գեօլլաըըմ մանըմ:

Հայերէն լարգ.

Հեռու ընկած հայրենիքից,
 Միշտ ողբալով լաց եմ լինում,
 Սոխակի պէս կարօտ վարդից,
 Հառաչելով լաց եմ լինում:

Գոռ բաղդը ինձ օտնահարեց,
 Երկնքից գետին գլորեց,
 Ծառաներիս ինձնից խլեց,
 Միտք բերելով լաց եմ լինում:

Կայտառ հասակիս նետ դիպաւ,
 Սիրտս կտրաւ փորս ընկաւ,
 Ծամերն երեսիս ծածանաւ,
 Սյգ լիշելով լաց եմ լինում:

Գահար Միրզայ, վարդի հօտը,
 Զուռի հօրօտն ու մօրօտը,
 Մի գեղեցիկ՝ աղբրի մօտը,
 Տեսանելով լաց իմ լինում:

Երգն աւելի է ազդում խեղճ աղջկայ վերայ
 ու այդպէս շփոթուած դրուժեամբ, սափորն
 առանց ջուր լցնելու, գատարկ վերադառնում է

տուն: Երբ հայրը պահանջում է որ ձեռին ջուր
 լցնէ, նա գատարկ սափորը ծռում է, իբր թէ
 հօր ձեռին ջուր է լցնում: . . . բայց տեսնելով
 որ սաստիկ յափշտակութիւնից մոռացել է սափո-
 րը լցնել, գլուխը քաշ արած, ամօթից կարմ-
 րում է ու լաց լինում:

Հայրը նկատելով որ դուստրը այլայլուած ու
 շփոթուած դրուժեան մէջ է և անշուշտ նրան
 մի անսովոր դէպք պէտքէ որ պատահած լինի,
 քաղցրութեամբ ու շոյելով ստիպում է, որ ու-
 դիղը խոստովանի և ամեն ինչ պարզօրէն ասէ:
 Հօր խօսքերից վստահութիւն առած, աղջիկն
 այլ ևս ոչինչ չի կարողանում ծածկել, իւր սրտի
 դաղտնիքն ու ամեն ինչ պարզ յայտնում— խոս-
 տովանում է:

Հայրը ուշադրութեամբ լսելով աղջկայ պատ-
 մութիւնը, աւարտելուց յետոյ անմիջապէս մարդ
 է ուղարկում, որ անծանօթ հիւրին հրաւիրեն
 տուն:

Հրաւերն ընդունում է թէ չէ, Գահար Միրզան
 տեղից վեր է կենում, շորերը թափ տալիս—
 մաքրում, վերան գլուխը կոկում և ինչպէս մի
 իշխանազն գնում ներկայանում Խանվերտի Բա-
 գիրկեանին, որ իրան էր սպասում:

Բագիրկեանը աշխարհատես և խիստ փորձուած
 մարդ լինելով, հէնց առաջին հայեացքից նկա-
 տում է, որ իւր հիւրը հասարակ մահկանացու-
 ներից չէ. այլ կամ մի թագաւորազն է կամ

իշխանագն: Մի առանձին պատկառանքով ու սիրով վերաբերուելով նրան . . . մանաւանդ երբ լսում է նրա կոկ ու վայելուչ խօսակցութիւնը, որ միայն ուսեալ անձանց է յատուկ: Այդ ժամանակ իւր մէջ համոզվում է և իրաւունք է տալիս աղջկան, որ նա իրաւունք ունէր մի այդպիսի երիտասարդի գեղեցկութիւնով յափշտակուելու և իւր սիրտը նրան նուիրելու: Եթէ չափազանցութիւն չի լինի, պէտքէ ասել որ հէնց Բաղիրկեանն ինքն էլ է սիրահարվում նրա վերայ: Ետ հարց ու փորձից յետոյ, Գահար Միրզան իւր ով լինելը Խանվերտի Բաղիրկեանին ուզում է երգով հասկացնել. ուստի վեր է առնում սազը և աշխուժով երգում հետեւեալ երգը. —

Հաթամ Սուլթան բանի սուրկիւն բիւյուրտի,
Միգիլայ գիւշուպտուր էհտաճըմ մանըմ,
Փալակն գեարտուշի, էլն սիթամի,
Վուրտի խարաբ էթտի օ թաճըմ մանըմ:

Եար ուճուննան գիւկիւնլիամ-դաղլիամ,
Ղարիպ օլբեալարտայ բախդի բաղլիամ,
Ղահրամանլի Ահմատ վագիր օղլիամ,
Սարտան գեալրտի խարաճըմ մանըմ:

Գահար Միրզայ, վասմայ գեալմագ բու սօզն,
Ղարիբ օլբեալարտայ հէչ գիւլմագ իւզն,

Ղարշըտաքի տուրան բուլղարլի զըզն,
Տուրսն շահլար շահի օ բաճըմ մանըմ:

Հ * յ է ր է ն Է * ր Գ.

Հաթամ Սուլթանն ինձի աքսոր հրամայեց,
Քու խնամքիդ մնաց իմ յոյս ու ճարս,
Բաղդի դառն հարուածը այս օրը քցեց,
Ծովի յատակն իջաւ իմ անգին քարս:

Միրոյ թեւերի տակ ես այրուած եմ,
Եւ օտար հովանուց ես պաշտպանուած եմ,
Ահմատ վագիրի պէս հօրից զրկուած եմ,
Փշրաւ Եգիպտոսից բերած քնարս:

Գահար Միրզայ, հաշուի չի գայ խօսքերդ,
Օտար հովանու տակ չի ծիծաղի երեսդ,
Ի՛նչդ կանգնող կոյսը հաշուէ քոյ քոյրդ,
Կոտրուեց ջութակս, կտրուեց լարս:

Այնուհետեւ Գահար Միրզան Խանվերտի Բաղիրկեանի տան մէջ ընդունուած էր, ոչ իբրև հիւր՝ այլ իբրև տան անդամ: Ամենքը նրան սիրով ու պատկառանքով էին վերաբերվում: Նրա ոչ մի խօսքը գետին չէր ընկնում: Մանաւանդ Խանվերտու միակ դուստրը, նրա սիրտը գրաւելու համար, որ իւր ապագայ փեսացուն էր համարում, այնպէս էր վերաբերվում, որ տեսնողն ու լսողը կը զարմանար և իւր աչքի տեսածին չէր հաւատայ: Սակայն մտահոգ Գահար Միրզի համար դրանց

ոչ մէկը գրաւիչ չէր և ոչ էլ մի առանձին արժէք ունէր: Նրա խելքն ու միտքը զօր գիշեր իւր Զօհրայի վերայ էր մտածում. . . . նրա աչքին ոչ կայք էր գալիս, ոչ կարողութիւն և ոչ այլ ինչ . . . այլ քնած թէ արթուն՝ միշտ Զօհրան էր իւր աչքի առաջ պատկերանում:

Այսպէս օրերը մէկը միւսի յետևից անցնում էին, բայց Ռահար Միրզան ոչ մի բաւականութիւն ու մխիթարանք համարեա չէր գտնում այդքան ճոխութեան, փարթամութեան ու ջերմ համակրանքի մէջ:

Մի օր էլ իբրև մեծ վաճառական, պէտք է լինում որ Խանվերտի Բագիրկեանը քառասուն օրով բացակայէ իւր տանից: Ուստի կանչում է աղջկան և պատուիրում, որ այսքան օրով ես պէտքէ մեր տանից հեռանամ . . . դու գիտես որ, ասում է, մենք քառասուն հատ այգի ունինք մէկը միւսից լաւ, ուրեմն մինչև իմ վերագարձը, օրը մի այգում կգբաղեցնես Ռահար Միրզին, մինչև որ ես կգամ. և այնուհետև ինչ որ անելու ենք կանենք:

Աղջիկը հաւանութիւն է տալիս հօր ասածներին: Հետևեալ օրը Խանվերտի Բագիրկեանը բեռները բարձած ճանապարհ է ընկնում:

Այնուհետև ինչպէս ասում են— «տունը մնում է իրանց, բազր հաւերին » . աղջիկն ու Ռահար Միրզան մնում են տանը միայնակ:

Աղջիկը հետևելով հօր տուած պատուերին, ամեն օր նախաճաշիկից յետոյ, Ռահար Միրզին հրաւիրում է մի այգի զբօսնելու և ժամանակ անցկացնելու համար:

Ռահար Միրզան այդ աղջկայ շարժումներից ու գէպ ինքն ունեցած համակրանքից պարզ կերպով նշմարում է, որ սիրահարուած է իւր վերայ, և ամեն կերպ աշխատում է ու միջոցներ սրունում, որ իրայ սիրտը գրաւէ: Բայց ինչ որ անում չի անում, չի կարողանում իւր Զօհրան մոռացութեան տալ ու այդ աղջկայ սիրով զրաւվիլ:

Մի անգամ էլ, երբ աղջիկը բոլոր ուժերն ամփոփած, ուզում է մի ճոխ ու սրտագրաւ տեսարան ցոյց տայ նրան. Ռահար Միրզան մի կերպ ուզում է նրան հասկացնել, որ սիրտն ու կամքը իրան չի պատկանում: Իբր անգիտակ աղջկայ նպատակներին, պահանջում է իւր սագն ու իւր մտքում, նրա սիրտը շահելու համար, աղջկայ անունը Նարգիզ դնելով՝ հետևեալ քաղցրալուր երգը երգում.—

Գէնա գեալտի եազ այլարի,
Աչըլըպսան լալայ նարգիզ,
Ազաճ ալթտայ չխտի ջանըմ,
Ռա՛մ էլլա տալայ նարգիզ:

Աղիս զօլլարն սալէիպսան,
Իփակ շալի սօլէիպսան,

Գիւրճիստանի թալէիպսան,
Սան օլուպ սան լալայ նարգիզ:

Նսփ քեասըբսան բանըմ եօլըմ,
Ղուրբսան զանատըմ զօլըմ,
Տուտի թաքի օթան դիլըմ,
Դօնուպսան բիւլբիւլայ նարգիզ:

Գահար Միրզայ եանայ եանայ,
Ջիկեարըմ դէօնտի բիւրեանայ,
Սան բիր եշիլբաշլի սօնայ,
Իւչտուն գեօլտան գեօլայ նարգիզ:

Հայերէն լարգ.

Գարձեալ անուշ գարունն եկաւ,
Գուն կը բացուիս կարմիր նարգիզ,
Ծառների հովանու տակին,
Շուտ կը ծաղկիս կարմիր նարգիզ:

Միպտակ թւերդ պարգեցիր,
Վերադ մետաքս շալ գցեցիր,
Մինչի Վրաստան գնացիր,
Անգ կը փայլիս կարմիր նարգիզ:

Ինչ ես կտրում շաւիղներս,
Մի կտորատիր իմ թւերս,
Ոչ էլ թութակի խօսքերս,
Մեղք արի բիւլբիւլիս նարգիզ:

Գահար Միրզաս խիստ այրուած,
Սիրտըս դառել է խորոված,
Դու մի բազ ես բնից թռած,
Եկ հաւարիս կարմիր նարգիզ:

Օրերը կարծես հետ գհետէ սահում գնում էին,
բայց Գահար Միրզի սիրտը միշտ մառախլապատ էր. տխրութեան մառախուղն ու սև ամպը միշտ վարագուրած էին նրա սրտի խորքերը: Հանգստութիւնն ու մխիթարութիւնը վաղուց փախել հեռացել էին նրանից: Ոչ մի հրճուանք, ոչ մի գրգուռանք չէին հրապարում ու զրավում նրան . . . նա միշտ տխուր էր ու տխուր:

Մի օր էլ երբ բահը ձեռքն առած Խանվերտի Բագիրկեանի այգու մէջ ուզում է ծաղկները ջրել, նրանց տեսքն ու գեղեցկութիւնը Զօհրա Խանումին յիշեցնում ու պտտկերացնում են իւր յիշողութեան մէջ: Նոյն րոպէին բահը ձեռից վեր գնելով, սաղն է առնում ձեռքն ու այս սրտաճմլիկ երգը երգում. —

Սանայ չաղըմիշամ եարատան զանի,
Նատանն եաղի օլտի էլլար մանինան,
Ալագեօզլի Զօհրամ դիւշտի եատըմայ,
Գեօր նէճա օյնիօր Ֆէլլար մանինան:

Ման եարի գեօրմասամ, զինհար բաղլարամ,
Սինամ իւստայ չալ ու չափրաստ դաղլարամ,

Բիւլբիւլ բիւլամ բաղ իչընտայ աղլարամ,
Զիվայ թաք թիթրաշը տաղլար մանինան:

Գեօրն Գահար Միրզայ ջանայ եթշտի,
Գարտ ու մէհնաթ զիլայ զանայ եթշտի,
Սօնդըմ գեալտի բիր բաղպանայ եթշտի,
Գաստըմայ խուբ օյնար բէլլար մանինան:

Հայերէն լարֆ.

Քեզ եմ ապաւինել, ո՞վ ստեղծող Տէր,
Ինչո՞ւ ցաւ կը բերեն օտարներն ինձի,
Սեւաչեայ Զօհրայիս դու իմ միտս բեր,
Որ չլնի թէ ծաղրեն օտարներն ինձի:

Թէ սիրուհուս տեսայ՝ ես դաշն կանեմ,
Ուխտս սրտի մէջը յատուկ կը ցանեմ,
Սոխակի պէս այգում աղաղակ կանեմ,
Սնդկի պէս չը շարժեն օտարներն ինձի:

Տես թէ, Գահար Միրզայ, վերջդ ուր հասաւ,
Սյս ցաւերը սիրուհիդ արժան տեսաւ,
Վերջը բաժանուելիս անգամ չը խօսաւ,
Թող չը մեղադրեն օտարներն ինձի:

Մի գիշեր էլ որ խառնիխուռը երազներից խեղճ
Գահար Միրզան շատ անհանգիստ է լինում, ա-
ռաւօտեան լուսաբացին — արշալոյսի ժամանակ —
տեղից վեր է կենում տխուր ու մտախոհ մըր-
նում Խանվերտու խաս բախչէն: Տեսնում է որ սո-

խակները վարդի թփերին նստած երգում են: Սյս
տեսարանը ազդելով Գահար Միրզի սրտին, իս-
կոյն իւր Զօհրան միտքն է գալիս ու սկսում լաց
լինելով երգել. —

Գէճայ գիւնուզ եար եօլունի բաքլարամ,
Խիալըմտայ արզուլարամ եար սանի,
Բիւլբիւլ քիմի զար զլարամ բաղլարտայ,
Ղօրխարամ քի էլլար զուճայ եար սանի:

Գիւլտայ իտըմ, խապար էթտըմ բիւլբիւլայ,
Ման մայիլ օլտում հարա բիր՝ բիր գիւլայ,
Գեօզալլար բէգանուփ եղըլայ գեալայ,
Միւխաննաթ գեօզլարըմ արարտի սանի:

Բիր օթ սալտն Գահար Միրզայ ջանընայ,
Նազլի եար տուրմազտը էօզ փէյվանընայ,
Իւզի զարայ գէթսն հախ դիվանընայ,
Գեօնուլ, քիմլար էթմիշ ինթիզար սանի:

Հայերէն լարֆ.

Գիշեր ցերեկ ճանապարհը նայելով,
Երագումս էլ քեզ լիշումեմ, սիրուհիս,
Սոխակի պէս այգիներում հայելով,
Իսկ քեզ համար ինձ մաշումեմ սիրուհիս:

Վարդի կողմից բարևեցէք սոխակին,
Մատաղ լինիմ նրանց սուրբ նպատակին,

Ամեն մարդ թող հասնի սրտի փափագին,
Քեզ համար ես ինձ խաշումեմ, սիրուհիս:

Կրակ քցիր Դահար Միրզիս սրտի մէջ,
Բայց չը կացար քոյ տուած պայմանի մէջ,
Սևերես թող գնայ մեծ առեանի մէջ,
Քոյ պատճառով ինձ տաշումեմ, սիրուհիս:

Երգն աւարտելուց յետոյ, ինքն իրան մի քիչ սփոփում է և լուռ ու մունջ նստում մի ծաղկապատ տեղ ու անթարթ նայում բնութեան այդ քաղցրախօս երգիչներին:

Այդ միջոցին արեգակը ծագելուն մօտ էր, երբ աչքը մի կէտի վերայ դարձրած նայումէ, որ տեսնի թէ վերջն ինչ դուրս կգայ: Մի սոխակ որ շատ երգելուց բեզարել էր ու մի քանի վայրկեան աչքերը խփել, լանկարծ աչքը բանում տեսնում է, որ սիրած վարդի կոկոնը արգէն բացուել է: Սրտի սաստիկ ցաւից ու կսկիծից, թէ ինչո՞ւ սիրած վարդի բացուելը չը տեսաւ ու իւր նպատակին չը հասաւ, տեղնուտեղը ինքն իրան սպանում— ոչնչացնում է: Այս տեսարանը խիստ ազդելով Դահար Միրզի վերայ՝ դարձեալ իւր Ձօհրան միտ բերելով՝ լացակրկնած երգում է.—

Ղարիպ երտայ քիմսայ եթմազ դատրմայ,
Գէնայ դահպա Փալակ եան վերտի դէին,
Բազ իչընտայ Ձօհրա գիւշտի եատրմայ,
Գիփրիկի սինամայ շամ վերտի դէին:

Զիվիստան զահրընի չաքեան բիւբիւլար,
Գեօրիմ աչմասն օ զըզլ գիւլար,
Եատրմայ գիւշանտայ նավ ջիվան զուլար,
Գիտամ եաշ երընայ դամ վերտի դէին,

ահար Միրզայ եազն բէլլայ եազլտի,
Գարտ ու մէհնաթ սինամ իւտտայ գիւզուլտի,
անատ չալտի գիւլ եափրաղի փօզուլտի,
Բիւբիւլ գիւլ երընայ ջան վերտի դէին:

Հայերէն լարգ.

Օտար երկրում ոչ ոք չեկաւ օգնութեան,
Դարձեալ բաղբա՝ սառաւ գնաց իբր թէ,
Այգում Ձօհրաս միտքըս ընկաւ անպայման,
Շուտ միջոցում դառաւ գնաց իբր թէ,

Հէնց սկզբից շատ ցաւ քաշող սոխակներ,
Տեսնեմ որ ձեր մօտը չը բացուին վարդեր,
Միտքս գալով իմ նորահաս ծառաներ,
Խելքս գլխէս թռաւ գնաց իբր թէ:

Դահար Միրզայ ճակատիդ այս էր գրուած,
Գարտ ու ցաւը սրտիդ վերայ դրոշմուած,
Խեղճ սոխակը վարդի սիրոյն այրուած,
Կեանքը տուեց—մեռաւ գնաց իբր թէ:

Սիրահար սոխակներից մէկը տեսնելով իւր ընկերի մահը, կանգնում է նրա գլխի վերայ ու

Հազար տեսակ դալլալիկներով դովում—լաց է
լինում և սուգ ու շիւան անելով ողբում ըն-
կերի մահն ու անձնուիրութիւնը:

Այս բանը ևս առաւել ազդում է Գահար Միր-
զի սրտին: Նա տեսնում է որ անբան կենդանեաց
մէջն անգամ դէպի մէկ մէկու չափազանց սէր
ու զգացմունք կայ . . . նրանք էլ նպատակի չը
հասնելու համար՝ անձնագոհ լինել դիտեն և մէ-
կը միւսի վերայ ցաւիլ ու ողբալ: Ուստի սիրտը
շարժուելով այս տեսարանից, սազը ձեռքն է
առնում ու խօսքն ուղղելով դէպի լացող սոխա-
կը, սկսում է հետեւեալ սրտաշարժ երգն ասել. —

Սահարտան աղլիան բիւլբիւլ,
Սան աղլամայ, բան աղլարամ,
Ջիկեարն դաղլիան բիւլբիւլ,
Սան աղլամայ, բան աղլարամ:

Բիւլբիւլն գէյտիկի եշիլ,
Ղզըլ գիւլլարայ տօլաշիր,
Աղլամաղ բանայ եարաշիր,
Սան աղլամայ, բան աղլարամ,

Գահար Միրզալ գէյտի դարայ,
Սինամ օլտի հազար փարայ,
Բիւլբիւլ գիւլայ, բան օ եարայ,
Սան աղլամայ, բան աղլարամ:

Հայերէն լարդ.

Այգէժագին լացող սոխակ,
Դու մի լաց ըլի, ես եմ լալու,
Սիրտդ վերքով խոցող սոխակ,
Դու մի լաց ըլի, ես եմ լալու:

Հագել է շքեղ-պատուական,
Կարմիր գունով վարդի նման,
Լաց լինելը ինձ է պատկան,
Դու մի լաց ըլի, ես եմ լալու:

Գահար Միրզան է սեւաւոր,
Սիրտն եղել է հազար կտոր,
Սոխակ, քանց ինձ ես բաղդաւոր,
Դու մի լաց ըլի, ես եմ լալու:

Դեռ այս տեսարանների թարմութիւնը չէր ան-
ցել և Գահար Միրզան նրանց ազդեցութեան տա-
կից չէր դուրս եկել, որ ահա միւս կողմում տեսա-
րանը փոխվում է: Մի ուրիշ սոխակ տեսնելով
որ խարը (ողդ—թըթուր) մօտենում է իւր վար-
դի տերևները կրծելու, թևերը թափահարելով
աղաղակ է բարձրացնում, շատ ֆիզան անում ու
սրտի կսկիծից օդի մէջ բարձրանում, և իրան
այնպէս ուժեղ քցում վարդի փշի վերայ, որ փու-
շը խրելով սրտի մէջ՝ սպանում է խեղճ հայվա-
նին: Սրանից յետոյ արդէն յայտնի է թէ սիրա-
հար սիրտը ինչ կը լինի:

Դահար Միրզան որ այս բոլոր տեսարաններին ահանատես էր.— «Հէյ վախ, ասում է, մի թէ ես այս անբան թռչունների չափ էլ չկամ, որ իրանց կեանքն անգամ զոհուամ— չեն խնայում սիրած առարկայի համար. բայց ես Զոհրաս թողած կրակ ու բոցերի և վիշտ ու տառապանքների մէջ, ինքս այս օտար երկրում խելացնոր թափառում եմ . . . ամօթ ու հաղար ամօթ ինձ »: Այս ասելով՝ վրդովուած սրտով վեր է առնում սաղն ու երգում հետևեալ մելամաղձիկ երգը.—

Սահարի գիււղան չաղընտայ,
Գէշտ էլլատն բաղի բիւլբիւլ,
Գիւլտն ախլըմի ափարտն,
Նա՛ օլուփսան եաղի բիւլբիւլ:

Բու գիար զարիպ գիարտըր,
Չաքտուճակըմ ահիգարտըր,
Բախտաւար քի գիւճան վարտըր,
Փարալատն գաղի բիւլբիւլ:

Դահար բաշընտան գէչանտայ,
Եար ուրփան մաճլիս աչընտայ,
Զօհրայ եար բատայ իչընտայ,
Բան օլայտըմ սաղի բիւլբիւլ:

Հայերէն Քարգ.

Սառաւոտեան լուսաբացին,
Այգում թռչում է սոխակը,

Ծիծաղեց ու խելքս սարաւ,
Ինձնից փախչում է սոխակը:

Այս երկիրն օտար երկիր է,
Գաշածս ճակատագիր է,
Երգար է՝ ով մեղսակիր է,
Մեղքից զղջում է սոխակը:

Դահար Միրզի խելքը գնաց,
Երբ լի սեղանը տեսաւ բաց,
Զօհրան բաժակում երևաց,
Հոգով շրջում է սոխակը:

Երգը վերջացնելուց լետույ, վճռում է անշուշտ նոյն օրն և եթ վերագառնալ հայրենիք: Այդ օրը Խանվերտի Բազիրկեանի տանից բացակայ լինելու քառասներորդ օրն էր, որ պէտքէ անշուշտ վերագառնար տուն:

Խանվերտու աղջիկը, որքան էլ համոզում է, աղաչում-սլաղատում թէ սպասիր մինչև հօրս գալը, բայց հնար չի լինում, նա միաբերան պնդում է թէ, պէտքէ անշուշտ գնամ ոչ գնամ, այլ ևս անկարելի է ինձ այս կողմերում մնալ:

Խեղճ աղջիկը տեսնելով որ ոչ մի հնար չկայ նրան արգելել, դիտմամբ ժամանակ վատակելու համար, նախաճաշն ու ճաշը սովորական ժամանակից լետաձգում է ու այլ և այլ սրտաճառաբանութիւններով և զանազան կողմնակի խօսակցութիւններով զբաղեցնում, որ գուցէ հայրը

գայ վրայ հասնի ու մի հնար կամ առիթ գտնի նրան իւր մտադրութիւնից յետ կացնել:

Բայց Դահար Միրզան շատ լաւ էր հասկանում աղջկայ սիրտն ու նպատակը, միայն չէր ուզում ոչ մի կերպ անբաւականութիւն պատճառել նրան, կամ ցաւեցնել նրա սիրտը: Միշտ ձգտում—աշխատում էր մի կերպ գոհացում տալ նրան, որ իրանից անբաւական չը մնայ: Հէնց այս մտքով էլ դարձեալ նրա հետ գնում է խաս բաղչէն ու գեղեցիկ վարդենաստանի մօտ հասնելուն պէս, սազը ձեռքն է առնում և իւր Զօհրան մտաբերելով ու աղջկան հասկացնելով իւր վերջնական որոշումը չը մնալու համար, այրուած սրտով երգում է այս երգը:—

Աշուղ—մաշուղըննան նէճա դամ չաքեար,
Գեօր նա՛ փիս տութաի իշընի բիւլբիւլ,
Սահար ղօնճասընի նաղար էյլատի,
Ակտի գեօղլարընի դաշընի բիւլբիւլ:

Օլալի տաղլարն դաուլի գեարաքտըր,
Զարվաղլի բաղլարն բարլի գեարաքտըր,
Հարքեաշն աշնայի եարլի գեարաքտըր,
Իստամագ հար եթան նաշընի բիւլբիւլ,

Գեօրն Դահար Միրզայ սինայ դաղընի,
Զարաֆատ աւընայ քեաս ալաղընի,
Փարի գակտի՝ փօզտի գիւլ եափրաղընի,
Ջան վէրտի սէօքեանի բաշընի բիւլբիւլ:

Հայերէն Քարգ:

Տես թէ ինչ աղաղակ ու ցաւ է քաշում,
Սիրուն թութակի հետ խօսող սոխակը,
Կիսբաց կոկոններին խիստ լաւ է աշում,
Բացուելը չի տեսնում երգող սոխակը:

Չորացած—մերկացած սարին ձիւն է պէտք,
Արտասուող աչքերին անուշ քուն է պէտք,
Կոտրուած սրտերին ամուր սիւն է պէտք,
Այս ամենը գիտէ սուլող սոխակը:

Դահար Միրզայ քեզ այրել է արևը,
Նախանձ ու փուչ մարդից կտրէ բարևը,
Խորշակը թօթափեց վարդիդ տերևը,
Զի ափսոսում ցաւդ տեսնող սոխակը:

Երզն աւարտելուց յետոյ, այլ ևս ոչ աղջկայ թախանձանքներին է լսում և ոչ սպասում Խանվէրտի Բագիրկեանի վերադարձին: Ջերմ կերպով աղջկայ ձեռքը սեղմելով՝ մնաս բարով է ասում և նրան յանձնարարում, որ իւր կողմից հօրը շնորհակալութիւն ու առանձին գոհունակութիւն յայտնէ: Ահա այսպէս կրկին ու կրկին շնորհակալութիւն անելով աղջկան, իրան մատուցած յարգանքի ու համակրութեանց համար՝ արտասուալի աչքերով դուրս է գալիս սլարտիզից ու ճանապարհ ընկնում:

Հազիւ թէ մի վերստաչափ ճանապարհ էր

գնացել, որ աղջիկը տրտում ու սրտակոտոր տուն
է մտնում և տեսնում, որ հայրն արդէն եկել է:

Հայրը նկատելով աղջկայ տխուր դրութիւնը
և հասկանալով թէ բանն ինչուսն է, իսկոյն
հարցնում է.— „ ո՞ւր է մեր հիւրը? :

— „ Գնաց „. կարճ է լինում պատասխանը:

— „ Ե՞րբ գնաց „:

— „ Հազիւ մի քանի րոպէ առաջ „:

Այսքանը լսելուն պէս, Բագիրկեանը իսկոյն
ձի է նստում ու գնում նրա յետեւից:

Գահար Միրզան քաղաքից նոր էր ոտք գուրս
գրել, որ Խանվերտի Բագիրկեանը հասնում է
նրան ու սկսում համոզել, որ յետ դառնայ . . .
միանգամայն խոստանալով որ իւր ամբողջ կա-
րողութեանը ժառանգ կը նշանակէ նրան և
որգեգրելով կը փեսայացնէ:

Այդ խօսքերն ու խոստումները թէ սարին—
քարին ասած, թէ Գահար Միրզին՝ մի և նոյնն
էր: Նրան ոչ մի խոստում, ոչ մի ժառանգու-
թիւն, որքան էլ մեծ լինէր, չէր կարող գրաւել
և իւր բուն նպատակից յետ կացնել:

Բագիրկեանը տեսնելով, որ խոստումները չեն
օգնում, փորձում է երգով գրաւել: Ուստի մի
տեսակ համոզեցուցիչ փափուկ գիրք ընդունելով,
սկսում է երգել, որին իսկոյն երգով պատաս-
խանում է Գահար Միրզան:—

Բաղիրէանը

Ջանըմ օղուլ, գեօզըմ օղուլ,
Օղուլ, գեալ գէթմայ—գեալ գէթմայ,
Ետըրէիմ դանտ ու նօխուտ,
Օղուլ, գեալ գէթմայ—գեալ գէթմայ:

Գահար Միրզան

Ջանըմ բաբայ, գեօզըմ բաբայ,
Իգին—քեարամ էթ գիտարամ,
Սանայ զամթ օլսուն Քեաբայ,
Իգին—քեարամ էթ գիտարամ:

Բաղիրէանը

Շահար—քեանտըմ սահան օլսուն,
Սանայ դուրբան ջանան օլսուն,
Շահար զըգի եարան օլսուն,
Օղուլ, գեալ գէթմայ—գեալ գէթմայ:

Գահար Միրզան

Նէ՛յնարամ շահարի—քեանտի,
Աչլմիշ աղխ գեօքսըն բանտի,
Ամէիմ լասլարն դանտի,
Իգին—քեարամ էթ գիտարամ:

Բաղիրէանը

Սան սօզումայ զարշի տուրմայ,
Եազըղամ, բօյնումի վուրմայ,

Խանվէրտիի եալլուց զօյժայ,
Օղուլ, գեալ գէթմայ—գեալ գէթմայ:

Դահար Միրչան

Իգին էլլա, գիտիմ բարի,
Եատրմայ գիւշուպտուր եարի,
Մուրախաս էլլա Դահարի,
Իգին—քեարամ էթ գիտարամ:

Հայերէն թարգ.

Վահագնաւոր

Իմ պատուական սիրուն որդի,
Որդի մի գնայ, մի գնայ,
Ուտացնեմ մեղր ու կարագ,
Որդի մի գնայ, մի գնայ:

Դահար Միրչան

Իմ գթառատ սիրուն հայրիկ,
Իրաւունք տուր, որ ես գնամ,
Եղիր ապահով, երջանիկ,
Իրաւունք տուր, որ ես գնամ:

Վահագնաւոր

Գեղ, քաղաքս թող քեզ լինի,
Դու մի ձգտիր ուրիշ բանի,
Քեզ տամ գուտոր շահնշահի,
Որդի մի գնայ, մի գնայ:

Դահար Միրչան

Ի՞նչ եմ անում գեղ ու քաղաք,
Ինձ հասել է մի աղաղակ,
Վասն այն գնումեմ վաղվաղակ,
Իրաւունք տուր, որ ես գնամ:

Վահագնաւոր

Իմ խօսքերին ղէմ մի գնիր,
Սփսոս եմ վիզս մի կտրիր,
Խանվէրտուն մենակ մի թողնիր,
Որդի, մի գնայ մի գնայ:

Դահար Միրչան

Հայրիկ, թէ ուզում ես բարիս,
Թող որ հասնեմ անուշ եարիս,
Ազատ արած խեղճ Դահարիս,
Իրաւունք տուր, որ ես գնամ:

Բագիրկեանը տեսնելով որ այս միջոցն էլ չի օգնում ու էլ ուրիշ ոչ մի հնար չկայ, աղ ու հաց հալալ անելով, համբուրվում է Դահար Միրչի հետ և վերջին մնաս բարովն ասելով, տիտուր ու տրտում վերադառնում է տուն, ափսոսալով որ այդպիսի թանգակին որքը ձեռքից փախցրեց: Այժմ գանք Դահար, Միրչին. Բագիրկեանից բաժանուելուց լետույ, դարձեալ ընկնում է սարէ սար, քարէ քար և օրեր ու շաբաթներ դաւրիշի

նման այստեղ ու այնտեղ քաշ է գալիս:

Չը մոռանանք լիշել, որ ճանապարհին Գազար Միրզան մի անգամ շատ քաղցածու թիւն է զգում: Տեսնում է որ մօտակայ բլուրի վերայ մի հովիւ ոչխարներ է արածացնում:— « Գնամ դրա մօտ, ասում է, մի քիչ հացուձաց առնեմ ուտեմ, մի փոքր հանգստանամ, կազդուրվիմ ու այնպէս շարունակեմ ճանապարհս, որովհետեւ քաղցածու թիւնից ոտքերիս ոյժ էլ չը մնաց »: Այս մտքով քայլերն ուղղում է դէպի հովիւն և մօտենալով նրան՝ բարևում է ու մի քիչ ուտելիք խնդրում:

Սկզբում հովիւը սազը նրա ուսից քաշ արած տեսնելով, հասարակ աշուղ է կարծում և մերժելով նրա խնդիրն ասում.— « ամեն պատահական անձուգարձ անողի որ կերակրեմ, ուրեմն իմ տիրոջ տունն էլ ինչ պէտքէ տանեմ »:

Այս անսպասելի պատասխանն հովուից լսելով Գազար Միրզան, սազն ուսից վեր բերելով քօքում է ու սկսում երգել այս երգը:—

Իրադ երտան գեալտըմ սանայ,
Հապաս գետրտում չօպան սանի,
Իիր օթ սալտըն շիրին ջանայ,
Հապաս գետրտում չօպան սանի:

Չօպան սանայ դուրբան ջանըմ,
Քիմսատան եօխտուր գիւնահըմ,

Խարապ օլտի խան իմանըմ,
Հապաս գետրտում չօպան սանի:

Երգի երկու տունը դեռ հազիւ է վերջացրած լինում, որ հովիւը իրան վիրաւորած համարելով, դադանակի մի լաւ հարուած իջնում է Գազար Միրզի ուսին: Բայց Գազար Միրզան մեծահոգի գտնուելով առ ոչինչ է համարում հովուի տուած հարուածն ու իւր երգը առանց ընդհատելու շարունակելով աւարտում է հետեւեալ խօսքերով.—

Սան եարամայ վուրտուն թապար,
Բազըըմ բաշի դապար—դապար,
Չօհրատան բանայ բիր խապար,
Սաֆայ գետրտում չօպան սանի:

Արթտըն իւրակըն եաղի,
Սինամայ չաքտըն բու դաղի,
Գազարն չէչմի չրաղի,
Սաֆայ գետրտում չօպան սանի:

Հայերէն լատգ.

Հեռու տեղից մօտդ եկայ,
Դատարկ տեսնեմ հովիւ քեզի,
Վառ կրակների մէջ ընկայ,
Դատարկ տեսնեմ հովիւ քեզի:

Հովիւ քեզի մատաղ լինիմ,
 Ես ոչ ոքից մի յոյս չունիմ,
 Կորաւ հաւատս, ուր կորիմ.
 Դատարկ տեսնեմ, Հովիւ քեզի:

Վէրքիս զարկիր մի սուր դանակ,
 Կարծեցիր անում ես հանաք,
 Զօհրային արդեօք ուր տարաք,
 Բարով տեսայ, Հովիւ քեզի:

Հալուել է իմ սրտիս եղը,
 Կտորածը էլ չի գայ տեղը,
 Դահար, չկայ ցաւիդ դեղը,
 Բարով տեսայ, Հովիւ քեզի:

Հովիւը ուշադրութեամբ լսելով նրա երգը, նկատում է որ սա իւր կարծած սովորական մուրացիկ աշուղներից չէ: Ներողութիւն է խընդրում և թարմ հաց ու կաթով կերակրելուց յետոյ՝ ճանապարհ գցում:

Այնուհետև Դահար Միրզան ճանապարհը շարունակում է անմարդաբնակ տեղերով, որ չը ճանաչուի ու դարձեալ մատնուի:

Մի երկօր գնալուց յետոյ, մի օր սաստիկ բէզարում է և նստում հանգստանալու: Այդ միջոցին տրանջալով ծնկաչօք հետևեալ աղօթքն է կարդում.— « Ով թագաւորաց թագաւոր Աստուած, բացի քեզանից էլ ուրիշ օգնական

չունիմ . . . դու որ Յովսէփին եօթնամեայ բանտարկութիւնից ազատեցիր ու Եգիպտոսի իշխան կարգեցիր . . . Նոյնպէս դու որ Յովնան Մարգարէին կէտի փորում քառասնօրեայ բանտարկութիւնից ազատեցիր . . . նրանց բարեխօսութեամբ ինձ էլ ողորմիր ու օգնէ, որ ես էլ այս նեղ դրութիւնից ու թշուառ կացութիւնից դուրս գամ և հանապաղ փառաբանելով քոյ սուրբ անունդ օրհնեմ»:

Այս կարճ աղօթքից յետոյ, վերան մի տեսակ մրափ գալով՝ քնում է: Երազում տեսնում է որ մի պատկառելի անծանօթ ձիաւոր ծերունի մօտեցաւ իրան ու ասում է.— « Դահար, Աստուած խնդրուածքդ լսեց ու ինձ ուղարկեց, որ քեզ այս նեղ դրութիւնից ազատեմ, վեր կաց արի նստի գաւակս գնանք . . . »: Բայց Դահար Միրզան չը գիտէր թէ, իրան այս նեղ դրութիւնից ազատողը զինաւոր սուրբ Սարգիսն էր:

Անմիջապէս զարթնում-վեր է կենում, ծերունու ձեռքը համբուրում է ու իսկույն թռնում նրա գաւակը: Այնուհետև բոլորովին չիմացաւ ու չը հասկացաւ թէ, ինչպէս ճանապարհ գնացին . . . մէկէլ յանկարծ այն է տեսնում, որ լուսաբացին հօրենական պարտիզի մէջ կանգնած են:

— « Վեր արի », ձայն է տալիս ծերունին:

Դահար Միրզան գաւակից վեր գալուն պէս՝ ծերունին անյայտանում է: Այն ժամանակ Դահար

Միրզան երեսը գետնին քսելով զոհ է լինում
Առտուածանից ու գէմքը շուռ տալով դէպի Ձօհ-
րա խանումի ապարանքը, ուրախութեան ար-
տասունքը աչքերին՝ այս երգն է երգում. —

Սապար վարմիշ Ձօհրա ջանըմ,
Բանըմ դարտըմա դարմանըմ,
Ջիեատա ուլումիշ գահիր,
Խապնագիտան ուլան ջանըմ:

Բիր դաչ իլտըր զնտան չաքտըմ,
Գէճա գիւնուզ ֆիդան էթտըմ,
Հախ նուսրաթ էլլատի չաքտըմ,
Ուլան բանըմ Ձօհրա ջանըմ:

Հասրաթըմ իւզում գեօրմաղա,
Բուխլարմ գիւլըմ տուրմաղա,
Գեալտըմ սանա ջան վէրմաղա,
Ուլան, հէյ դարտա դարմանըմ:

Սալաիւկիւմ բիրեան եարատըր,
Ինթիզարըմ սան եարատըր,
Գեալան Դահար բէչարատըր,
Ուլան, դօվլաթլի սուլթանըմ:

Հ * յ է ր է ն Ը * ր Գ .

Ինձի լուր հասաւ քեզանից,
Ով իմ ցաւերին ցաւակից,

Հեռացուր թոյնը ինձանից,
Ձարթիր խոր քնից իմ սոխակ:

Քանի տարի բանդ նստեցի,
Գիշեր ցերեկ ախ քաշեցի,
Վերջը կեանքին յարմարուեցի,
Ձարթիր դու իմ Ձօհրա հոգեակ:

Կարօտս երեսիս վերայ,
Դրոշմուել է ու կերևայ,
Քեզ մօտ հոգի տալու եկայ,
Ձարթիր իմ սիրուն աղաւնեակ:

Սիրուհիս, քու սիրտդ քնր է,
Վերկաց խնդիրս կատարէ,
Եկող Դահարն խիստ անձար է,
Ձարթիր դու իմ սիրոյ հրեշտակ:

Այս անգամ Դահար Միրզան խոհեմութիւն
չի համարում իսկոյն հրապարակ դուրս գալ ու
իրան յայտնել. մի քանի օր մօտիկ բարեկամ-
ներից մէկի տանը ծածկվում է, մինչև մի կերպ
աջողացնում է հաւատարիմ մարդկանց միջոցաւ
իւր վերադարձը յայտնել Ձօհրա խանումին:

Պանդխտութիւն քաշած օրերից աւելի ծանր
ու դառն էին Դահար Միրզի ալթմեան քաշած
օրերը: Որովհետև եկել հասել էր հայրենիք, ինչ-
պէս ասում են, Ձօհրա խանումի քթի տակին
բուն գրել, բայց չէր աջողվում նրան տեսնել ու

երկար տարիների կարօտը նրանից առնել: Միայն թնչ կարող էր անել.— « անճարն է կերել բանջարը », կամայ—ակամայ լռում է ու սպասում աջող հանգամանքներին:

Ինչպէս տեսանք, Դահար Միրզան արդէն հասել էր հայրենիք և իւր հաւատարիմների միջացաւ լուր տուել իւր կարօտակէջ սիրուհուն:

Մալաքսիման որ Զօհրա խանումի պալատական նաժիշտների մէջ նրա ամենահաւատարիմ սրտակիցն ու խորհրդակիցն էր. մանաւանդ նրանից գաղտնի ոչինչ բան չկար Հէնց Դահար Միրզի վերադարձի ստոյգ լուրն ու որտեղ լինելը առնելուն պէս, աճապարում է Զօհրա խանումի ննջարանը ու տեսնելով որ քնած է, նստում է նրա մօտ ու ակնագարդ փոքրիկ սազը ձեռքն առնելով, ուզում է երգով իմացնել նրան իւր սիրականի վերադարձը. ուստի սկսում է մելամաղձիկ եղանակով երգել այս երգը.—

Խիւրէի խապայ եաթան Զօհրա,
Ուլյան Զօհրա, եարըն գեալտի,
Դարտ ու զամայ բասան Զօհրա,
Ուլյան Զօհրա, եարըն գեալտի:

Ղալխիմ սազըմի ենտըրիմ,
Ենտըրիմ, դիզայ բինտըրիմ,
Էհթաճըմ վար քի դինտըրիմ,
Ուլյան Զօհրա, եարըն գեալտի:

Արըսըն տաղլարն զառի,
Թօքիւլսուն բաղչանն բարի,
Դեաթրտըմ մուճտայ խապարի,
Ուլյան Զօհրա, եարըն գեալտի:

Նա բաթըսան դարտ ու զամայ,
Տուր զուլաղ աս սաղայ— դամայ,
Սանայ զուրբան Մալաքսիմայ,
Ուլյան Զօհրա, եարըն գեալտի:

Հայերէն Քարգ.

Խորունկ քնով քնած Զօհրա,
Զարթիր Զօհրա, եարդ եկել է,
Ցաւերի մէջ կորած Զօհրա,
Զարթիր Զօհրա, եարդ եկել է:

Վեր կենամ քնարս բերեմ,
Բերեմ ծնկանս վեր դնեմ,
Խնդիրս քեզ հասկացնեմ,
Զարթիր Զօհրա, եարդ եկել է:

Հալուել է լեռների ձիւնը,
Կոտրել է սրտերի սիւնը,
Սւետիք բերին մեր տունը,
Զարթիր Զօհրա, եարդ եկել է:

Հոգսերի մէջ մնաս քա՛նի,
Վեր կաց ականջ դիր լաւ բանի,

Մալաքսիման չարդ տանի,
Զարթիր Զօհրա, եարդ եկել է:

Երգի ձայնն ականջին հասնելով և կանացի
ձայնի քնքշութիւնն ու քաղցրութիւնը ազդե-
լով ջղերին, իսկոյն տեղից սրտատրոփ վեր է
թռչում Զօհրա խանուժը, կաքաւի նման իրան
թափահարում— գրստվում է և բոլոր եղելու-
թիւնը Մալաքսիմայից մանրամասնօրէն տեղե-
կանալուց և ստուգելուց յետոյ, սրտի չափազանց
ուրախութիւնից, նրա ձեռքից սազն առնելով,
ինքն է սկսում երգել. —

Եսթմիշտըմ գիւշումայ դակտի բիր սատայ,
Աճապ Դահար բիզայ մէյման օլո՛ւր մի,
Օ գիւնաշ ջամալն գետրսաթօրն բիզայ,
Աճապ դարտըմըզայ դարման օլո՛ւր մի:

Գետրիմ իրադուբլար օղրասն վայա,
Զօխ սիթամ էլլատի բան բէյնավայա,
Միւպարաք այաղի բասայ սարայա,
Աճապ զոնաղըմըզ ուրշան օլո՛ւր մի:

Հար նա գիւնահի վար՝ Մավլան բաղըշլայ,
Սալիշում թէլլարի տօլանըր բաշտայ,
Աշք օլանըն բէլլա գեազար սարքիւշտայ,
Զօհրա թաքի բանտ ու ֆարման օլո՛ւր մի:

Հայերէն լատի.

Քնած տեղս ականջիս հասաւ մի ձայն,
Արդեօք ես Դահարին արժանի կլնիմ,
Թող ինձի ցոյց տայ բարձր հասակն այն,
Արդեօք ես Դահարին արժանի կլնիմ:

Տեսնեմ չարակամներն ընկնին թակարդը,
Ով որ եղաւ մեր բաժանման մակարդը,
Սրտում ցցուի սատանայի սուր կարթը,
Արդեօք ես Դահարին արժանի կլնիմ:

Ինչքան լանցանք ունի թող Աստուած ներէ,
Իւր արածի փոխարէն դէմը բերէ,
Զօհրա, մէջդ եզածն անարատ սէր է,
Արդեօք ես Դահարին արժանի կլնիմ:

Մալաքսիման ոչ մի առիթ չէր փախցնում,
որքան կարելի էր, երկու սիրահարներին մի-
մեանց մօտացնելու: Բայց չարը դեռ մեռած չէր:
Սուլթանի հաւատարիմ լրտես վատահոգի Արապը
ամեն բան հեռուից տեսնում և հաղորդում էր
Հաթամ Սուլթանին ու նրանից նորանոր հրա-
հանգներ ստանում իւր պաշտօնը լաւ առաջ տա-
նելու համար:

Ինչ և իցէ մի երեկոյ աջողվում է Մալաք-
սիմային, Դահար Միրզին Զօհրա խանուժի մօտ
հրաւիրելու: Դահար Միրզան երբ մտնում է նրա
սենեակը, տեսնում է որ սիրուհին խոր քնած է:

Ել չի ուզում նրան միանգամից ձայն տալ —
 զարթեցնել . . . այս ու այն կողմ աչք ածելով
 տեսնում է, որ Զօհրա խանուհի սատաֆապատ
 փոքրիկ սազը բարձի մօտ դրած է, վեր է առ-
 նում լաւ քօքում է ու ճնկան վերայ գալով
 սկսում երգել. —

Նա բիւրուբօսան չօլ իւխընըն քեանընի,
 Ուլյան, գեօզլարընայ զուրբան օլտուղում,
 Սանայ իտըն քեփրիկլարըն սանընի,
 Ուլյան, գեօզլարընայ, զուրբան օլտուղում:

Գեա՛հ գիտարամ, գեա՛հ գեալըրամ բաջիլա,
 Սըղընմիշամ դանի մավլամ խօջիլա,
 Տամ ելտըզի խէլի չիտի ուճիա,
 Ուլյան, գեօզլարընայ զուրբան օլտուղում:

Սանըն աթան բանի գեօզտան սալըպտըր,
 Սարալըպտան գիւլ լոանկի սօլըպտըր,
 Ուլյան Զօհրա, խան Գահարն գեալըպտըր,
 Ուլյան, գեօզլարընայ զուրբան օլտուղում:

Հայերէն Բարձ.

Ի՞նչ ես քնել դու այգքան խորը քնով,
 Զարթիր, խաժ աչերիդ ես մատաղ լինիմ,
 Մինչ երբ թովես ինձ այդ քոյ սև ունքերով,
 Զարթիր, խաժ աչերիդ ես մատաղ լինիմ:

Մերթ գալիս եմ, մերթ գնումեմ գիշերին,
 Չնշըվումեմ, գերի գառած քոյ սէրին,
 Լուսաստղը կանգնել է երկնակամարին,
 Զարթիր, խաժ աչերիդ ես մատաղ լինիմ:

Հայրդ ինձի յատուկ աչքից քցել է,
 Վարդի գոյնդ էր այդքան թօթափել է,
 Զարթիր Զօհրա, խան Գահարդ եկել է,
 Զարթիր, խաժ աչերիդ ես մատաղ լինիմ:

Զօհրան այս անուշ ձայնից զարթելով, տես-
 նում է որ երգողը Գահարն է: Երկար ժամանակ
 բացակայող սիրահարների յատուկ ջերմութեամբ
 փաթաթվում է նրա պարանոցով ու ժամերով
 այդպէս գրկախառնած մնում:

Մալաքսիման որ դրան բացուածքից ծածուկ
 հանգիսատես է լինում սիրահարների այս արա-
 րողութեանը, սիրտը հրճվում է և ինքն իրանից
 շատ գոհ է մնում, որ ճարպիկութեամբ աջողաց-
 րել էր սիրոյ ծարաւ սրտերը իրար մօտացնել:
 Հասկանալի է թէ երկար ժամանակ իրարուց
 բաժանուած սիրահար սրտերը, երբ մի անգամ
 իրար կը հանդիպին, էլ ինչ քաղցրութիւն կզգան
 և ինչպէս կը վերաբերուին մէկ մէկու:

Միմեանցից երկար ժամանակ հեռու մնալուց
 չետոյ, այսպէս էլ պատահեցաւ տարաբաղդ Գա-
 հար Միրզին ու Զօհրա խանուհին. որոնք երկար
 խօսակցելուց չետոյ, ժամադիր եղան և ուխտ ու

պայման դրին, որ այնուհետև ամեն օր Սուլթանի խաս բաղչում, վարդենեաց թանձր թփերի տակ տեսնուին:

Երբ Գահարը պատրաստվում էր գնալու, Մալաքսիման, միայն իրան յայտնի անծանօթ ճանապարհներով, նրան առաջնորդեց ճանապարհ քցելու, որ լրտեսները չը տեսնեն:

Բայց ոչ մի գործողութիւն մեզ ծանօթ Արապի աչքից ծածուկ չէր մնում: Նա մթուլթեան մէջ սատանայի պաշտօն էր կատարում և ամեն ինչ լաւ դիտելուց լետ, տասնապատիկ յաւելուածով, գնում հաղորդում սատանի ձիուն նստած չարահոգի Սուլթանին:

Սակայն երկար չի տևում Գահարի և Չօհրախանումի ուրախութիւնն ու գաղտնի տեսակցութիւնները:

Հաթամ Սուլթանը տակն ու վրայ եղած սեահոգի Արապի հաղորդած լուրերից ու տեղեկութիւններից, այս անգամ այնպէս խիստ հրաման է արձակում, որ ոչ թէ Գահար Միրզին բռնեն իրան ներկայացնեն, այլ սպանեն՝ մարմինը դազաններին տան, իսկ գլուխը երկար ձողին անցկացրած, դնեն հրապարակի վերայ իտես ժողովրդեան:

Գահար Միրզի հաւատարիմ մարդիքն այս լուրն իսկոյն հաղորդում են նրան ու զգուշացնում որ միամիտ չը մնայ:

Որքան էլ զգուշանում են, այնու ամենայնիւ դարձեալ հնար չի լինում: Սուլթանի լրտեսները մի օր աջողացնում են հէնց Չօհրախանումի ապարանքում ձերբակալել Գահար Միրզին:

Խղճալին երբ տեսաւ որ բաղդը ամեն տեղ հալածում է իրան, այսքանը միայն կարողացաւ ասել իւր սիրուհուն թէ, ամեն կերպ աշխատիր ինձ ազատես որ չսպանեն: Գիտեմ, ասում է, երբ չսպանեցին, անշուշտ դարձեալ աքսոր պիտի վարեն. այն ժամանակ հնար գտիր, որ ինձ կրպորածիթած արկղով գետը ձգել տաս, եթէ չես ուզում որ թշնամիք իրանց նպատակին հասած լինին: Իւր սրտի ցաւն ու տագնապը նրանից ծածկելու համար, հերոսաբար վե՛ր է առնում սազն և սիրուհուն սրտապնդելու համար երգում այս երգը.—

Աղլամայ, աղլամայ ալագեօզլի եար,
Ղօյ ափարսըն գեօրիմ չայ բանայ նէյնար,
Իւնուզի գայրատան ղուրթուրան Ալլահ,
Ղօյ ափարսըն գեօրիմ չայ բանայ նէյնար:
Գեալ մանըմ օրտակըմ, գեալ մանըմ ղազըմ,
Ման օլանտայ, եարաբ քիմ չաքեար նազըն,
Իմտատըմայ եթըշ Խըտըր Էլլազըմ,
Ղօյ ափարսըն գեօրիմ չայ բանայ նէյնար:
Գահար Միրզայ լապլարըննան ամտըղըմ,
Փարվանայ թաք աշք օտուկայ եանտըղըմ,

Մուշանպալայ աթ դարեայ սանտղղըմ,
Ղօյ ափարսըն գեօրիմ չայ բանայ նէնար:

Հայերէն Քարգ.

Մի լար, դու շատ մի լար, իմ սրտի սէրը,
Թող գետը ինձ տանի, տեսնեմ թնչ կանէ,
Յուենանին կէտ ձկից ազատող Տէրը,
Թող գետը ինձ տանի, տեսնեմ թնչ կանէ:

Արի իմ աղաւնեակ, արի իմ բարքիս,
Արի կեանք շնորհէ ինձ հոգեվարքիս,
Ինձ օգնութեան հասիր, ո՞վ դու սուրբ Սարգիս,
Թող գետը ինձ տանի, տեսնեմ թնչ կանէ:

Դահար Միրզան թող շրթունքներդ համբուրի,
Թիթեռի պէս սիրուդ կրակով այրի,
Կարածիթած սընտուկով գետը ձրգի,
Թող գետը ինձ տանի, տեսնեմ թնչ կանէ:

Այսպիսի հաճույական խօսքերով որքան էլ խրախուսէր, որքան էլ սրտապնդէր, այնու ամենայնիւ Զօհրան այն միամիտներից չէր, որ լուկ խօսքերով խաբվում — բաւականանում են: Նա լաւ էր զգում, թէ Դահար Միրզի բացակայութիւնն ինչ ազդեցութիւն կանէ իւր վերայ: Ուստի նրան հասկացնելու համար, թէ ինքը միամիտ խաբուողներից չէ, վեր է առնում սազնու հետեւեալ երգով պատասխանում Դահար Միրզի ասածներին. —

Նէճա աղլամէիմ, նէճա եանմէիմ,
Նէճա աթիմ իւմանլարա, եար սանի,
Ղավագ օլուպ դայրալարայ տալէիմ,
Նէճա աթիմ իւմանլարա, եար սանի:

Յօխտուր բանըմ քիմի դարտայ տայանան,
Դարտ ու դամ ալընտան դամայ բօյանան,
Դահար ալտան գէթաի, քթմոր օյանան,
Նէճա աթիմ իւմանլարա, եար սանի:

Չաղըր Զօհրա խանում խըզըր օյանսըն,
Չաղըրիմ արանլար իմտատա գեալսըն,
Դիլլարամ եարտըմչըն, եար, Ալլահ օլսըն,
Նէճա աթիմ իւմանլարա, եար սանի:

Հայերէն Քարգ.

Ի՞նչպէս չը լամ, կամ թէ ի՞նչպէս չայրուիմ,
Արդեօք քեզ ի՞նչպէս մատնեմ ալիքներին,
Լուղորդ դառած թող ջրերում տանջուիմ,
Արդեօք քեզ ի՞նչպէս մատնեմ ալիքներին:

Բնաւ ինձ պէս ցաւի դիմացող չկայ,
Սէրահարի լարգը իմացող չկայ,
Դահար, քեզի համար ինձի պէս լացող չկայ,
Արդեօք քեզ ի՞նչպէս մատնեմ ալիքներին:

Կանչէ Զօհրա խանում, կանչէ, շատ մի լայ,
Կանչէ, Տէրը թող քեզի օգնութեան գայ,

Խնդրէ որ ցաւերդ Տէրն ինքը հոգայ,
Արդեօք քեզ ի՞նչպէս մատնեմ ալիքներին:

Ձերբակալելուց յետոյ, Դահար Միրզին տա-
րան ներկայացրին Սուլթանին: Թէպէտ նա հրա-
մայել էր, որ բռնելուն պէս սպանեն:

Բորբոքած Սուլթանը շթունքները բարկու-
թիւնից դողդողացնելով, իւր հրամանը կրկնեց:
Բայց պալատականների զօրեղ միջամտութեամբ
սպանման վճիռը փոխուեցաւ մշտընչենական
աքսորի ու դատապարտութեան:

Սուլթանից ծածուկ, Ձոհրա խանումի միջ-
նորդութիւնն ընդունելով կաշառակուր հրա-
մանակատար պաշտօնեաները, վճռի գործադ-
րելու իրաւունքը յանձնեցին նրան ու շտապեց-
րին—որքան կարելի է շուտ կատարել, որ մի
գուցէ Սուլթանը լսէ ու իրանք մեծ պատաս-
խանատուութեան ենթարկուին:

Ձոհրա խանումը համաձայնեցաւ այս վեր-
ջին խորհրդին:

Վերջապէս վճիռը գործադրելու եղանակի
մասին, որքան էլ մտածում են, որքան էլ վերց-
նում—վեր դնում, այնու ամենայնիւ ամենից
յարմար ու հնարաւոր միջոցը Դահար Միրզի
տուած խորհուրդն էր: Այնուհետեւ էլ առանց

ժամանակ կորցնելու, Դահար Միրզան Ձոհրա
խանումի պարանոցին փարուելով, վերջին մնաս
բարեաւն է ասում և գնում նրա պատուէրին
համաձայն նախապէս խնամքով պատրաստուած
մարդաչափ արկղում գետեղվում: Չորս հսկայտղա-
մարդիք արկղի փականքն ու կապերը լաւ ամրա-
պնդելուց յետ, տանում յանձնում են ահեղագոյ
ու սրընթաց Նեղոս գետի փրփրադէզ ալիքներին:

Բայց ահեղասաստ գետը կարծես բանական
մարդի զգացողութեամբ հասկանում է, որ երկու
սիրահարները միմեանց աղ ու հաց հալալ չէին
արել և Ձոհրան իւր սէրը երգով չէր արտա-
յայտել Դահարին. այդ պատճառով էլ, երկու օր
էր որ արկղը ջրի հոսանքի հետ մի փոքր առաջ
գնալով, կրկին վերադառնում էր յետ և Ձոհրա
խանումի ապարանքի լուսամուտների տակ գըտ-
նուած ոլորպապտոյտ տեղում ջրի երեսին դա-
տարկ նաւակի պէս լողում էր ու շրջագայում:
Այս բանը նկատելով Ձոհրա խանումը, կանգնում
է լուսամուտի առաջ, սազը ձեռքն առնում,
սրտակոտոր ու լացակրկնած երգում այս երգը.—

Ախրպ գիտան զանլի դարայ.
Գեալտի խան Դահարըմ սանայ,
Բան օլմիշամ բաղդի դարայ,
Գեալտի խան Դահարըմ սանայ:

Ապտալ օլիմ գէլիմ աբայ,
 Դարտլարըմ գեալմազ հիսապայ,
 Սանտըզի սալմայ կրտապայ,
 Գեալտի խան Դահարըմ սանայ:

Ման Զօհրայամ դան աղլարամ,
 Սինամի չափրաստ գաղլարամ.
 Ետտի իլ դարայ բաղլարամ,
 Գեալտի խան Դահարամ սանայ:

Հայերէն Քարգ.

Հոսէ, գնայ արիւնտո գետ,
 Խան Դահարս եկաւ քեզի,
 Բաղդս կորաւ—եղաւ անհետ,
 Խան Դահարս եկաւ քեզի:

Ծառայ ըլնիմ, հագնիմ աբայ,
 Իմ ցաւերս հաշուի չի գայ,
 Արկղին բնաւ արգելք մի տայ,
 Խան Դահարս եկաւ քեզի:

Ես Զօհրան եմ արիւն կուլամ,
 Սիրուց չառայ ես հոտ ու համ,
 Եօթ տարի սև հագած մնամ,
 Խան Դահարս եկաւ քեզի:

Երգն աւարտում թէ չէ, մի մեծ ալիք գա-
 լով խփումէ արկղին և արկղը առաջ խաղալով
 ընկնում գետի սրընթաց հոսանքների մէջ ու ան-
 դարձ գնում հեռանում այգտեղից:

Երբ Զօհրա խանումը տեսնում է որ արկղը
 հեռացաւ ու փրփրագէց ալիքների մէջ կորաւ,
 սրտի սաստիկ ցաւից ու կսկիծից, ինքն իրան
 միայնակ, հետեւեալ տխրալի երգն է երգում.—

Ախրպ դանլի դարայ, չխտի չանաղտան,
 Բան բիւլուրամ սան ներանայ գիտարսան,
 Բու ալըլմաղ բիզայ վերըլտի հախտան,
 Ախրպ—ախրպ Աշտարխանայ գիտարսան:

Բիլմամ Հինտայ գիտիմ, եօխսամ Գիլանայ,
 Հալըմի արգ էտիմ դատըր բիլանայ,
 Բան աղլարամ, իւզըմ արսըզ գիւլանայ,
 Մարի ղոյմիշ եանայ—եանայ գիտարսան:

Նէշուն բաղբի դարայ օլտում աղիբաթ,
 Սավտատան հուճուլթըմ էլլատըմ բարբաթ,
 Դահարի սան ղուրթար սահապի հէքմաթ,
 Տալ ղալանըպ սան հար եանայ գիտարսան:

Զօհրա եանտի Խան Դահարն ղամընտան,
 Տօյամատըմ սօհպատըննան—գամընտան,
 Ռուզկեար ասար, տալղայ գեալը գամընտան,
 Բան բիւլուրամ, սան Մսըրայ գիտարսան:

Հ ա յ է ր է ն Բ ՝ ր Գ .

Հոսէ արիւնոտ գետ, էլ յետ չը դառնաս,
Ես գիտեմ թէ, դու անսասան ուր կերթաս,
Այս բաժանումն երկնից ընկաւ մեզի մաս,
Հոսելով մինչև Աշտարխան դու կերթաս:

Չը գիտեմ Հընտստան, թէ Գիլան գնամ,
Որ խորհուրդս մի գիտցողի մօտ բանամ,
Արդեօք ողբամ, թէ այսուհետ ծիծաղամ,
Հոսելով մինչև Խօրասան դու կերթաս:

Ինչո՞ւ սկզբիցը ես անբաղդ եղայ,
Ինձ վիճակուած սուրբ սէրիցը լաղթուայ,
Գահարին վտանգից պահէ, Տէր Արքայ,
Հոսելով մինչև Հընտստան դու կերթաս:

Ջօհրաս այրվումեմ Գահարի ցաւով,
Տեղ չեմ հասնում սիրոյ ալէճուփ նաւով,
Սիրելուս խլեցին ձեռիցս դաւով,
Հոսելով մինչ Արաբստան դու կերթաս,

Թէ քանի օր արկղը ջրի հոսանքի հետ գը-
նում է, այդ Աստուած գիտէ: Միայն մի օր երբ
Եգիպտոսի (Մսրու) կառավարիչ փաշայի աղջի-
կը—Բանի խանումը իրանց գետափնեայ պար-
տիցի մէջ զբօսնում էր իւր ընկերուհիների
հետ, նրանցից մէկը մատնացոյց է անում նրան,
որ գետի ալիքները մի ինչ որ բան են բերում

դէպ իրանց:

Բանի խանումը նկատելով, որ ալիքներին
խաղալիք դարձած առարկան մի անսովոր բան
է երևում, պարտիզպանին ու նրա օգնականնե-
րին հրամայում է, որ բռնեն ջրից դուրս քա-
շեն այդ աւարը: Հրամանն իսկոյն կատարվումէ:

Մի քանի ուժեղ բազուկներ մարդաչափ արկ-
ղը ջրից դուրս են քաշում գետափը: Բայց Բա-
նի խանումը մտածում է, որ այս բանում ան-
շուշտ մի մեծ գաղտնիք պիտի լինի թաքցրած,
և չուզելով որ բոլորը գիտենան նրա ինչ լի-
նելը, զբօսանքը թողնում ու իսկոյն հրամայում է,
որ չորս հօգի արկղը ուսերին բարձած գնան դէ-
պի իրան ապարանքը: Այս հրամանն էլ անմիջա-
պէս կատարվում է:

Արկղը որ վեր են դնում, բոլորին հրամա-
յում է հեռանալ, բացի մի քանի մեծամեծների
աղջկերանցից, որոնք իւր խիստ մտերիմներն էին:

Արկղի բերանը բաց են անում թէ չէ, տես-
նում են որ մի քրտնփչած հրեշտակատիպ երի-
տասարդ, իշխանավայել փափուկ անկողնի մէջ
անուշ քնած է:

Բանի խանումը, որ ինքն ևս սիրոյ գերինե-
րից էր, շատ լաւ հասկանում է այս խաղը խա-
ղացողի բուն նպատակը. և չուզելով հասարակ-
օրէն նրան ձայն տալ—զարթեցնել, սիրահար-
ների յատուկ սովորութեամբ, իւր քաղցրալուր
սազը ձեռքն առնելով, սկսում է մեղմ երգել.—

Աշք ուճուննան աթըլապսան դարեայա,
Զըխ սանտըխտան աճամ օղլի, վար երի,
Ազալ բաշտան սարըն սալտըն սավտիայ,
Զըխ սանտըխտան աճամ օղլի, վար երի:

Բաղչալի սան, հէլվալի սան, նարլի սան,
Սօյլիայտըն գեօրիմ նա՛ գիարլի սան,
Սանտա՛ բանըմ կիպի ահիզարլի սան,
Զըխ սանտըխտան աճամ օղլի, վար երի:

Ալըմ աթտըմ սանտըղընըն բանտընայ,
Զօխ ինանմայ ֆօստ Նարգիզն ֆանտընայ,
Տուր աչաղա՛ սանի ալիմ գեանտըմայ,
Զըխ սանտըխտան աճամ օղլի, վար երի:

Ղուրբան օլիմ սանի տօղան անիայ,
Սանի տօղտի, բանի սալտի բալիայ
Ռահմ էյլա փաշա զըզի Բանիայ,
Զըխ սանտըխտան աճամ օղլի, վար երի:

Հայերէն Քարէ,

Սիրոյ համար ես ընկել դու խոր գետը,
Արկղից դուրս եկ պարսիկորդի ու ողջ կաց,
Վաղուց սրտիդ դիպել է սիրոյ նետը,
Արկղից դուրս եկ պարսիկորդի ու ողջ կաց:

Ազնուկան, թէ իշխանի ցեղից ես,
Ասա տեսնեմ, արգեօք դու սրտեղից ես,

Դուն էլ ինձի նման կսկծալից ես,
Արկղից դուրս եկ պարսիկորդի ու ողջ կաց:

Ձեռքս մեկնեմ քոյ մեծ արկղի փականքին,
Մի հաւատայ Նարգիզի սիրուն գէմքին,
Արի վերկաց ու տէր եղիւր իմ կեանքին,
Արկղից դուրս եկ պարսիկորդի ու ողջ կաց:

Մատաղ լինիմ քեզի ծնանող մօրը,
Որ քեզ ծնաւ՝ ինձ զցեց բաղդի հօրը,
Խնամք արա դու Բանիիս այս օրը,
Արկղից դուրս եկ պարսիկորդի ու ողջ կաց:

Երգի քաղցրալուր ձայնը Գահար Միրզի ա-
կանջը ընկնելով, զարթնում է և տեսնելով որ
շջապատուած է մի խուճբ իշխանուհի սևաչեայ օրի-
որդներով, որոց մէջ ամենագեղեցիկը Նարգիզն
էր, որը նոյն բոպէին թուվելով, Գահար Միրզի
սիրտը առ ժամանակ գրաւեց գէպի իրան, պատ-
կառանքով վեր է կենում տեղից ու նստում Բա-
նի խոնուճի մատնացոյց արած արաբական նախ-
շուն գօրգի վերայ:

Ակզբում տատանվում է, թէ արգեօք սրանց
մէջ մեծը և իրաւանց տէրը ո՞րն է . . . գե-
ղեցիկ Նարգիզը, թէ Բանի խոնուճը:

Վերջապէս այլ և այլ կարգադրութիւններէց
հասկանում է, որ մեծ իշխանուհին Բանի խա-

նումն է, իսկ նարգիզը նրա ընկերուհիներէց մէկն է, որին ինքը իսկոյն սիրահարուել էր:

Վերջապէս բաւականին կորագլուխ մտածելուց ու իւր շուրջը գննելուց յետոյ, որպէս զի իւր ով լինելը նրանց հասկացնէ և շնորհակալութիւն յայտնէ իրան մատուցած մարդասէր համակրանքի համար, սազը որ իւր անբաժան ընկերն էր, վեր է առնում մի լաւ պատրաստում է ու իւր նազելի Զօհրան միտք բերելով՝ զգաճուած սրտով երգում.—

Ազալ դեօլ աչաղըմ, սիգի գետօրուղում,
Թանդրի բանի սիգայ ղուրբան էլլասըն,
Գեօկտայ արար իքեան, երտայ բուլտուղում,
Թանդրի բանի սիգայ ղուրբան էլլասըն:

Եղմիշաբը վաքիլ—վազիր հայալի,
Բու մաճլիտտայ հիւրի ղըլման եղալի,
Սանայ ղուրբան բաշի ալթուն ջղալի,
Թանդրի բանի սիգայ ղուրբան էլլասըն:

Գահար Միրզայ դէլլար բանըմ էօզումայ,
Աշք ուճուննան իւխի գիրմազ գեօզումայ,
Բան մայիլամ Հաթամ Սուլթան ղըզընայ,
Թանդրի բանայ օնայ ղուրբան էլլասըն:

Հ * յ է ր է ն Է * ր Գ .

Աչքս բացի թէ չէ, ես ձեզի տեսայ,
Աստուած թող ինձ ձեզ պէսին մատաղ անէ:

Երկնքում ման եկածս, երկրում գտայ,
Աստուած թող ինձ ձեզ պէսին մատաղ անէ:

Հաւաքուած են պատկառելի իշխաններ—
Այս ատեանում, մեծամեծ նախարարներ,
Արևի պէս ցօլան թագիգ գօհարներ,
Աստուած թող ինձ ձեզ պէսին մատաղ անէ:

Գահար Միրզայ կասեն իմ իսկ անուներ,
Սիրոյ համար աչքիս չի գալիս քուներ
Սէրս մնաց Հաթամ Սուլթանի տուներ,
Աստուած թող ինձ իսկ նրան մատաղ անէ:

Բանի խանումը որ շատ հետաքրքրուող անձնաւորութիւններից էր, իւր հիւրին իրայ ով լինելը հասկացնելուց ու լաւ պատուասիրելուց յետոյ, խնդրում է որ սկզբից մինչև վերջը մանրամասնօրէն պատմէ իւր գլխից անցկացած արկածները:

Գահար Միրզան որ սովոր էր— ըստ տեղւոյն— ամեն դատակարգի մարդու մի կերպ բաւականութիւն տալ սիրով յանձն է առնում իւր հիւրընկալի իղձն ու փափագը լցնել . . . Առանց մի կէտ ծածկելու պատմում է այն ամենը, ինչ որ անցել էր իւր գլխից և հասնում մինչև այն կէտին, որին ահանատես էր Բանի խանումը իւր շրջապատողներով:

Այնուհետև Գահար Միրզան որ մի քանի ժամ հանգստանում է, Բանի խանումը նրա շորերը

սրբել է տալիս, ոտքից գլուխ անուշահոտ իւղերով օծում է ու վարդաջրերով սրսկում և հետն առած տանում ներկայացնում իւր փաշայ հօրն ու համառօտակի հասկացնում նրան Դահար Միրզի ով լինելն ու ինչ անցքերի զոհ դառնալը:

Աղջկայ պատմութիւնից տեղեկանալով՝ փաշան շատ սիրով ու առանձին համակրանքով է վերաբերվում նրան. և ըստ տեղական սովորութեան, նրա ողջութիւնից ու առողջութիւնից հարցնելուց յետոյ, առաջարկում է որ խօսի և մի փոքր զբաղեցնէ իրանց:

Ինչպէս տաճիկներն ասում են — « դարտիչ սօյլակեան օլուր », (ցաւ ունեցողը շատախօս կլնի.) կարծես ողբալի Դահար Միրզան էլ մի թեթեւ հրաւերի էր սպասում, որ բերանը բանայ ու իւր սրտին ծանրացած ցաւերը բռնկած հրաբուխի նման դուրս ժայթքէ—մի քիչ թեթեւանայ:

Փաշայի հրաւերն ընդունելուն պէս, սազը շապկահան է անում ու տաճկական բանաստեղծների սովորութեան համեմատ փաշային ու իւր շրջապատող մեծամեծներին խոր գլուխ տալով սկսում է երգելով իւր ցաւերը մերկանալ.—

Հաթամ Սուլթան ղազաբընայ օղբատըմ,
Բիւլուրտի ջանլաթայ Փարմանայ մանի,
Ղօլի բաղլի դիվանընայ երըշտըմ,
Աթտի թուննան թունայ—իւմանայ մանի:

Բանտայ բիր զեօզալն օտունայ դիւշտըմ,
Օխուտում քիթապի, հարֆըննան սէչտըմ,
Օ գաման քի նազարընայ սաթաշտըմ,
Աթտի ղուրբաթլըղայ—բիր եանայ մանի:

Փաքըմ եօխտուր եա Սուլթաննան, եա խաննան,
Փարվանայ թաք աշք օտունայ եախաննան,
Ղիամաթայ ալ զեօթուրմամ եախաննան,
Ղօլի բաղլի վերմայ եամանայ մանի:

Դահար Միրզայ սօզի շահայ բիւտըր,
Դօստ աղլատըր, դիւշմանընի գիւլտըր,
Էլայ բիլըն Զօհրա դարտի օլտըրըր,
Թապիպ սան թէգ եթըր դարմանայ մանի:

Հայերէն լատի.

Հաթամ Սուլթանի պատժին պատահեցայ,
Հրամայեց դահճին, որ պատժէ ինձի,
Թուերս կապ՝ մեծ ասեանը տարուեցայ,
Վճռուեց որ մեծ զետը ձգէ ինձի:

Ես մի զեղեցիկի սիրով վառվումեմ,
Երկար տարիք սիրոյ համար կռվումեմ,
Երբ տեսան որ հնար չկայ՝ խարվումեմ,
Աքսորեցին, որ սէրը տանջէ ինձի:

Կախում չունիմ ոչ Սուլթանից, ոչ խանից,
Թիթեռի պէս վառայ սիրոյ կրակից,
Մինչ կատարած չի ազատուի իմ ձեռնից,
Ձեռս կապած մի տար խորովէ ինձի:

Դահար Միրզան խօսքը տեղը հասցրեց,
 Լաւին լացուց, թշնամուն ծիծաղցրեց,
 Այնպէս գիտցէք Ձօհրի սէրն ինձ սպանեց,
 Թէ օգնող ես, գոնէ շուտ օգնէ ինձի:

Երգն աւարտելուց չետ, փաշան ու իւր մեծամեծներն աւելի ու աւելի են հետաքրքրվում Դահար Միրզայի անցեալով: Նրան խօսացնում—
 սլատմել են տալիս ու իրանք ուշադիր լսում: Սէրն ու հայրենիքի կարօտը, շատախօս էին դարձրել Դահար Միրզին: Նա որքան խօսում էր, այնքան էլ բանաստեղծօրէն ընդլայնում էր իւր խօսակցութեան նիւթը. կտօարելապէս մի վիպասան էր դարձել: Այդ պատճառով էլ փաշան շատ է սիրում նրան ու ամեն կերպ աշխատում է բաւականութիւն տալ: Դեռ այս բաւական չէ. փաշայի մեծամեծներն էլ հետևելով իրանց գլխաւորի օրինակին՝ ամեն կերպ մեծարում ու յարգում են:

Էլ թնչ ասել կուզէ, որ սիրոյ արբանեակ և արբուսքի հասած Բանի խանումը խօմ, ոտքով ու գլխով նրան էր նուիրուած և ինչ անելը չը գիտէր, ոտքի տեղ՝ գլխի վերայ էր գնում . . . :

Նրա սիրտը գրաւելու և մխիթարելու համար ոչինչ չէր խնայում: Օրը մի տեսակ փող ու քնար, պարահանդէս, երեկոյթ, ձեռնածուծիւն, սէր ու գգուանք անպակաս էին նրա տանից . . . : Դեռ շաբաթը մի անգամ էլ, որսորդ կանանց

խմբի հետ միասին, արմաւենեաց ու բանանի անտառներում և գետափնեայ շամբուտներում որսի էր տանում . . . : Միով բանիւ, թէ և Դահար Միրզի, ինչպէս ասում են « մի ձեւը եղումն էր, մինը մեղրումը », բայց այդ մեղկ, փարթամ ու շալլ կեանքումն էլ նա իւր Ձօհրային մի բոլոր անգամ չէր մոռանում: Ամենքը զարմացած էին մնացել նրա այդ աստիճան լամառ սիրոյ վերայ: Ոմանք գովում էին նրա այդ աստիճան անձնուիրութիւնը և ոմանք էլ պարսավում:

Սկսեալ փաշայից ամենքը ցանկանում էին Դահար Միրզային իրանց փեսայ ունենալ . . . մեծամեծ խոստումներ էին անում ու ամենագեղեցիկ աղջիկներ առաջարկում պատուաւոր ընտանիքներից, բայց ոչ մէկը նրա համար չէր: Նա գօր ու գիշեր ախ վախ քաշելով, միշտ Ձօհր անունն էր յիշում:

Բանի խանումը տեսնելով, որ նրա սիրտը որսալու և նրան գրաւելու ոչ մի միջոց չկայ, սկսեց այլ կերպ մտածել:

Մի անգամ հօր հետ խորհրդածելով ասաց թէ, — « ինչքան ես տեսնումեմ, նրան այստեղ պահել անհնար է. լաւ է որ մեր կողմից մի բարեք անենք նրան նպատակի հասնելու: Եւ այդ բարեքն այն կը լինի, հայր, որ գիջանիս և ինձ թոյլ տաս Դահար Միրզին անձամբ առաջնորդելու հայրենիք, իւր սիրուհու մօտ »:

Թէպէտ և հօր համար շատ ծանր էր այդ
 գիշորու թիւնն անել մի օտարականի համար.
 Բայց Բանի խանութի նման աղջկայ խօսքը
 կոտորելն էլ նոյնքան ծանր էր . . . : Մի փոքր
 տատանելուց յետոյ, վերջապէս զիջաւ, որ աղջ-
 կայ կամքը կատարուի:

Հօր համաձայնութիւնն ստանալուց յետոյ,
 Բանի խանութը ճանապարհի պատրաստութիւն
 է տեսնում և մի քանի օրից յետ, լաւ շքախմբով
 ճանապարհ ընկնում դէպի Գահար Միրզի հայ-
 բենիքը:

Վերջապէս այնտեղ հասնելուց յետոյ, ծրպ-
 տեալ Գահարին հետն առնելով գնում կանգնում
 է Զօհրա խանութի ննջարանի լուսամուտի տակ
 և իրան ով լինելն ու ինչ նպատակով այնտեղ
 գնալը, մասամբ հետևեալ անուշ երգով է հաս-
 կացնում. —

Բաշ զալտրըք սանայ դէյին գեալմիշամ,
 էլա բիլ քի սանայ գեօրմայա գեալտրմ,
 Եիրին ջանրմ աշք օտուռնայ սալմիշամ,
 Սանտայ օլան դարտլար տուլմայա գեալտրմ:

Եարալարըմ գեօզ գեօզ օլմիշ աչըլմիշ,
 Աթրաֆընտան զանի իրին սէչըլմիշ,
 Ձիվիստան զօյնուռնտայ գիւլար աչըլմիշ,
 Սինանտայ քի գիւլար գէրմայա գեալտրմ:

Ղուրբան օլիմ օ զամաթայ, օ բօյա,
 Ալթըն շանայ եարար գեարտանա մուլա,
 Մսըր փաշա զըզամ գեալմիշամ թօյա,
 Բան սանի Գահարայ վէրմայա գեալտրմ:

Հայերէն Քարգ.

Քու անուշդ ես լիշելով եկել եմ,
 Այնպէս գիտցիր որ քեզ տեսնելու եկայ,
 Միրուն անձս սիրոյդ համար դրել եմ,
 Քու ցաւերիդ դարման անելու եկայ:

Իմ վէրքերս նորոգուել են—բացուել են,
 Սիրտ ու թոքս վերաւորուել—խոցուել են,
 Թերթերունքս արտասուօք լուացուել են,
 Վէրքիդ հոտաւէտ դեղ ցանելու եկայ:

Մատաղ լինիմ ես քոյ բարձր հասակիդ,
 Արևի պէս փայլող թանգ գարգմանակիդ,
 Բանին, մատաղ լինի սուրբ նպատակիդ,
 Ես քեզ յատուկ Գահարին տալու եկայ:

Երգն աւարտելուց անմիջապէս յետոյ, Բանի
 խանութը հրաւիրվում է վեր Զօհրա խանութի
 ներքին սենեակները, իսկ Գահար Միրզան, Բանի
 խանութի մի ուղևորով անյայտանում է ու իսկոյն
 հեռանում այնտեղից, որ բանսարկու մարդ-
 կերանցից չը նկատուի:

Հէնց առաջին իսկ հայեացքից, Բանի խա-

նումի, դիրքը, խօսք ու գրույցն և ամեն ինչ
համոզումեն Զօհրա խանումին, որ իւր նոր հիւ-
րը հասարակ դասակարգի մահկանացուներէց չէ,
այլ մի իշխանական կամ ազնուական ցեղէց
պէտք է որ լինի:

Նրա դիրքին վայել հիւրասիրութիւն ցոյց
տալուց յետոյ, կամենում է մանրամասնօրէն
գիտենալ թէ, այդպէս միայնակ սրտեղից է գալիս,
կամ թէ Ղահարին սրտեղ է տեսել ու ճանա-
չել որ խաղի միջով հասկացրուց թէ, նրան
մօտիկից ճանաչում է:

Բանի խանումը նկատելով Զօհրայի ան-
հանգիստ դրութիւնը, իւր միտքը մասամբ
հետեւեալ երգով է արտայայտում, որին նոյնպէս
երգով պատասխանում է Զօհրա խանումը.—

Բանի Խանում

Եա բօգիւնտուր, ետտա սապախ,
Այիբտ օլուր իշըն Զօհրա,
Այրըթտըլար հասրաթինան,
Թէօքմայ գեօզտան եաշըն Զօհրա:

Զօհրա Խանում

Սաֆայ գեալտն գեօզմ իւստայ,
Չափրաստ գիւշմիշ իշըմ բաջի,
Իթրմիշամ բիր բազգատայ,
Նէճա թէօքմամ եաշըմ բաջի:

Բանի Խանում

Ղատտու խալըն բիւքիւլուպտուր,
Սիայ գիլֆըն սէօքիւլուպտուր,
Ղալամինան չաքիւլուպտուր,
Նամ դարատըր դաշըն Զօհրա:

Զօհրա Խանում

Բաղտայ սօլտի գիւլարըմըզ,
Լալ օլուպտուր գիւլարըմըզ,
Հաթամ զըռտի էլլարըմըզ,
Ղարալիտը բաշըմ բաջի:

Բանի Խանում

Բու դունեայ ֆանիտըր, ֆանի,
Գեօրտուկիւն Սուլէյման հանի,
Փաշա զըզի, ատըմ Բանի,
Գեաթրմիշամ զօշում Զօհրա:

Զօհրա Խանում

Զօհրայամ սարի դումանայ,
Ղուրպանամ դաշ ու քեամանայ,
Աթմիշամ դարեայ—իւմանայ,
Փակտի մանըմ տաշըմ բաջի,

Հայերէն քարգ.

Բանի Խանուհ

Կամ այսօր է, կամ թէ վաղը,
Քեզ աւետիք կասեն Զօհրա,
Կիմանաս դու խօսքի սաղը,
Աչքալոյս կը խօսեն Զօհրա:

Զօհրա Խանուհ

Բարով եկար Հազար բարի,
Սխա, գործս չի լինում քոյր իմ,
Սայլս դէմ է առել քարի,
Ոչ մէկը չի շինում քոյր իմ:

Բանի Խանուհ

Սիրտդ որքան շատ է մաշած,
Կարծես ուրագով է տաշած,
Ունքերդ գրիչով քաշած,
Մի օր քեզ կը լսեն Զօհրա:

Զօհրա Խանուհ

Այգում թառամեց վարդերս,
Խլին թանկագին զարդերս,
Մպանեցին ազգականներս,
Ինձ թողին սև օրում քոյր իմ:

Բանի Խանուհ

Այս աշխարհում տես թէ քանի—
Տեսակ, մարդս ցաւ կը տանի,
Ես փաշի աղջիկն եմ Բանի,
Թող քեզ վատ խօսք չասեն Զօհրա:

Զօհրա Խանուհ

Ես Զօհրան եմ, իմ թանկագին,
Մատաղ լինիմ աչք ու ունքին,
Ականջ դիր իմ խնդրուածքին,
Ինձ մի' թողուր ծովում, քոյր իմ:

Սրանից յետոյ ինչ որ փորձով գիտէր սիրոյ մասին. կամ թէ ինչ արկածներ որ, գլխաւորապէս անզգուշութիւնից, պատահում էին սիրոյ ասպարիզում, բոլորը մի առ մի բացատրում է Զօհրա խանումին և խորհուրդ տալիս, խոհեմութիւնը ձեռքից բաց չը թողնել:

Զօհրան այս վերջին խօսակցութիւնից աւելի ու աւելի է ամրապնդվում իւր կարծիքի մէջ Բանի խանումի վերաբերմամբ, որ նա հասարակ դասակարգից չէ: Սկսում է աւելի պատկառանքով վերաբերուել նրան: Իսկ նա հօր հետ ունեցած պայմանաժամի համաձայն, վաղը պէտքէ ճանապարհ ընկնէր: Հէնց այդ պատճառով էլ Զօհրա խանումին նոր յայտնում էր հար Միրզայի այդտեղ լինելն ու աւելացնում, որ „ թէ և վաղը երեկոյեան քեզ մօտ հիւր կգայ, բայց

դուք անշուշտ զգուշացէք Սուլթանի լրտես-մատ-նիչ Արաբից ու բանսարկու Ղարաչու անուն դաւաճանից, որոնք « զօլվաթ զուշու », նման ձեր շուրջը պտըտվում են. ձեզ, մանաւանդ Դահար Միրզին, ամեն կերպ դաւաճանելով, որոգայթի մէջ ձգել: Այս կարճ ժամանակամիջոցում շատ բան նկատեցի և փորձով իմացայ ու համոզուեցի ձեր վտանգաւոր ապագայի մասին »:

Այս կարճ ճառով իւր պարտքը կատարած համարելով Բանի խանումը, հետևեալ առաւօտ կանուխ, գրկախառնած համբուրվում է Զօհրա խանումի հետ, վերջին մնաս բարովն ասում ու իւր սպասաւորների և շքախմբի հետ ճանապարհ ընկնում դէպի Եգիպտոս—իւր հայրենիքը. իսկ Զօհրա խանումը լաց լինելով մնում է ետևից նայելիս, որ այդպիսի հաւատարիմ բարեկամուհուց շուտ զրկվում է:

Զօհրա խանումի ապարանքը լրտեսող մատնիչներն ու դաւաճանները թէպէտ և մի բանի հոտ առել էին Բանի խանումի այդպէս աճապարանօք գալ գնալուց յետոյ, բայց իսկապէս չը գիտէին թէ ինչ է: Նրանք միայն այսքանը լաւ գիտէին, որ Դահար Միրզին գետը ձգելուց այս կողմ, բաւականին տարիք են անցել ու նրա մասին մինչև այսօր ոչ մի լուր, ոչ մի տեղեկութիւն ու ձայն չկայ: Ով գիտէ ինչ եղաւ, ասում էին, գետի ալիքների մէջ խեղդուեցաւ, թէ

գազանները պատառեցին, կամ մի փորձանքի մէջ ընկաւ . . . բայց և այնպէս ուժերը կրկնապատկելով սկսում են իրանց մահառիթ պարտքը կատարել—լրտեսել:

Այդ չարահոգիները, հակառակի նման, նոյն օրը երեկոյեան Զօհրա խանումի ապարանքում մի անսովոր ճրագավառութիւն են նկատում, որ իրանց ամեն օրուայ տեսածի հակառակն էր թւում, և կասկածելով մօտենում են լուսամուտին ու ապշած տեսնում, որ մինը թևերը փարած Զօհրա խանումի պարանոցով, միմեանց գրկախառնած պարկել են: Լաւ դիտելուց լետ, կարծես այլ ևս տարակոյս չի մնում, որ այդ անսպասելի հիւրը Դահար Միրզան պէտքէ լինի . . . բայց թէ երբ և ինչ ճանապարհով էր եկել մտել ապարանքը, որ իրանք չէին նկատել . . . այդ բանը նրանց համար մնում է մի անլուծանելի գաղտնիք:

Այսպէս թէ այնպէս, մի քանի հսկող պահ-նորդներ այդտեղ թողնելով, իրանք շտապում են ուր հարկն էր այդ լուրը հաղորդելու: Մի փոքր ժամանակից յետոյ, Սուլթանն ինքն անձամբ գալիս և ստուգում է հաղորդած տեղեկութիւնն ու աչքով տեսնում, որ ասածներն ուղիղ են:

Բորբոքուած ու մաղձոտած Սուլթանը դառնում է պալատ ու դահլիճ ձայն տալիս: Իսկոյն այդ արիւնարբու գազանները յայտնւում են ու

պատրաստի կանգնում Սուլթանի առաջ: Այդ անօրէնը խիստ հրաման է տալիս, որ նոյն ընդէին գլխատեն Դահար Միրզին ու այնպէս ոչընչացնեն, որ հետքն էլ անգամ չերևայ:

Բայց գահճապետը, բարի և փորձառու մարդ լինելով, խոնարհ կերպով նրան հասկացնում է թէ, — « մեծանուն Սուլթանո, կտրուած գլուխը էլ չի կենդանանայ, և ապագայի զղջումը՝ էլ ոչ մի բանի չի օգնէ. լաւ մտածէ ու հրամաններդ այնպէս գործ դիր, որ վերջը չը զղջաս: »

Շրջապատող մեծամեծները հաստատում ու վկայում են գահճապետի ասած ճշմարտութեան մասին ու իրանց կողմից էլ աւելացնում, որ « մենք արտաքին թշնամիներով միշտ շրջապատուած ենք. եթէ Դահարի նման քաջին այսօր սպանել տաս, այնուհետև մենք էլ դրտեղից կարող ենք ձեռք բերել նրա նմանը, որ գոնէ մեր թշնամիներին երկրից վանէ ու հալածէ ... »:

Սուլթանը մի քիչ ուշաբերուելով և ասածների վերայ լրջութեամբ մտածելով, համոզվում է նրանց ասածի ճշմարտութեանը: Այս անգամ նախկին վճիռը փոխելով, հրամայում է որ շղթայակալ մշտական աքսորի դատապարտեն երկրի կորած — մոլորած մի հեռաւոր խուլ անկիւնում:

Սոյն բարձրագոյն հրամանի կատարողն ու գործադրողը վերև յիշուած Ղարաչոռը պէտքէ լինէր, որ մի ժամանակ Դահար Միրզի մօտ

ձիապանի պաշտօն է կատարելիս եղել և իւր քսութեամբ ու մատնութեամբ այն աստիճանին հասել, որ այժմ պալատի գործավարների կարգումն էր, և Դահար Միրզի գետը ձգելուց յետոյ, ամեն ճիգ ու ջանք թափել էր Ձօհրա խանումի սրտին տիրանալ և նրա կամքը մի կերպ առնելով՝ հետն ամուսնանալ, բայց մինչև այդ օր նրան չէր աջողուել: Հէնց այդ պատճառով էլ, Դահար Միրզի մշտնջենական դատապարտութիւնը, կարծես մի տեսակ սփոփանք էր նրա սևամաղձ սրտին, որ գուցէ այնուհետև աջողացնէր իւր նպատակին հասնել:

Նախ քան շղթայելն ու դատապարտելը, Դահար Միրզան Սուլթանից խնդրում է, որ իրան թողաւորուի գոնէ մի անգամ էլ այն պարտէզներն ու ծաղկոցները տեսնել, որ Ձօհրա խանումի հետ մանկութիւնից սկսած զբօսնել ու գուարճացել էին:

Թէ և տատանուելով, բայց վերջապէս այս անգամ էլ լակամայից Սուլթանը զիջանում է նրա խնդիրը կատարել և պատուիրում, որ խիստ հսկողութիւն ունենան չը փախչելու համար:

Երբ Դահար Միրզին պահակներով շրջապատած տանում էին դէպի Սուլթանի խաս բաղչէն, նա մի արհամարհական հայեացք ձգելով Ղարաչոռի երեսին՝ ասում է. — « Ղարաչոռ, մի ժամանակ դու որ իմ մօտ ձիապան էիր, ես արժան էլ չէի

տեսնում քեզ հետ մարդավարի խօսելու, բայց այժմ որ քսուսթիւնով ու քոյ արած վատութիւններով այդ աստիճանին ես հասել, չես էլ ուզում մտաբերել. թէ ում հետ գործ ունիս, կամ թէ ինչ տեսակ ես վերաբերվում ու վարվում քոյ տիրոջ հետ: Միայն այսքանը լաւ գիտցիր, որ դու երբէք քոյ ցանկացած ու մտադրած նպատակին չես հասնիլ . . . »:

Այս խօսքերը Ռահար Միրզից լսելով Ղարաչուը, թէ և ամաչեց ու կարմրատակեց, բայց անօգուտ էր. որովհետև Չոհրա խանումի սէրը նրան գիակնացրել ու ապուշացրել էր:

Երբ մտնում են խաս բաղչէն ու Ռահար Միրզան աչքերը արագութեամբ շուրջանակի պըտտելով այս ու այն կողմ, անցեալի մտքուր լիշատակները մտաբերելով զննում է, և հետզհետէ առաջ գնալով հասնում այն վարդենաստանին, ուր մի ժամանակ ժամերով ու օրերով անուշ ժամանակ էր անցկացրել Չոհրա խանումի հետ . . . րոպէաբար մի տեսակ մոլեգնութիւն վերան գալով՝ լիշողութիւնը կորցնում է, գիտակցութիւնից դուրս է գալիս ու խելագարի նման կանգնած տեղը շուրջանակի պտույտ գալով, քղանցքի տակ թաքցրած դաշոյնը հանում ու « անձ թանկագին Չոհրա» ասելով միում կուրծքի մէջ և մի ակընթարթում դուրս քաշելով՝ շարտում մի կողմ և կուրծքից ժայթքած արիւնից մի բուռ վեր առած

սրսկում շուրջը գտնուած թփերի ու խոտերի վերայ, այս խօսքերը կրկնելով. — « արիւնս քեզ եմ նուիրում, անուշ Չոհրա, սրանից աւելի ոչինչ չունիմ քեզ տալու . . . » ասում է և խոտերի վերայ փռուելով հոգին աւանդում:

Այս գործողութիւնն այնքան արագութեամբ է կատարվում, որ շրջապատողները ապուշ են մնում:

Բօթաբեր լուրը կայծակի արագութեամբ հասնում է Չոհրա խանումին . . . : Նա սևեր հագած, հերարձակ և աչքն յարտասուս աճապարում է դառնաղէտ գործողութիւնը կատարուած վայրը . . . և կանգնելով սիրականի արիւնշաղախ դիակի մօտ, նրան գովում—գովաբանում, սգում—ողբում է նրա տարաժամ և անպարտ մահը . . . ցաւալի ճիչ ու աղաղակ բարձրացնում, պատճառին անիծում և վերջապէս խելացնորի նման օտքի կանգնելով աչք ածում այս ու այն կողմ . . . արիւնաներկ դաշոյնը աչքին ընկնելով, իսկոյն յափշտակում է ու նրա սուր ծայրը սրտին սեղմելով, այնպէս ուժեղ է ընկնում Ռահար Միրզի կուրծքի վերայ, որ դաշոյնի ծայրը թիկնամիջից դուրս է գալիս . . . թեքվում է մի կողքի ու իւր կուրծքից ժայթքած արիւնից մի բուռ էլ ինքն առնում ու ցանում իւր սիրականի սրկած արեան վերայ, հազիւ այսքանը թօթովելով — « Բեղանից լետոյ, գեղեցկատեսիլ Ռահար, այլ ևս

այս աշխարհում ինձ կեսնք պէտք չէ . . . և մի թոյլ շարժում գործելով՝ նա էլ նոյն բոպէին հոգին աւանդում է:

Երկու սիրահարների մահուան տխուր ու եղերական լուրը բերնէ բերան անցնելով, հասնում է մինչև մատնիչ Արապի ականջը: Նա շտապում և աճապարանօք հասնում է այն վայրը, ուր կատարուել էր այդ անձնագոհութիւնները: Երբ քովէ քով պարկած, աչքին պատկերանում են Գահար Միրզի և Զօհրա խանումի շուշանագեղ դէմքերն ու անշնչացած դիակները, իսկոյն խղճահարուելով՝ ինքն իրան է համարում այս անմեղ անձնագոհութեան բուն պատճառն ու ասում. — «Սրանք իմ մատնութեանց արգասիքն ու անպարտ զոհերն են . . . ուրեմն էլ այսուհետև աշխարհի երեսին ինձ կենդանի մնալն ինչու է պէտք, որ բացի թուք ու նախատինք ընդունելուց, էլ ուրիշ ոչ մի բաժին չունիմ Սյս ասելով՝ վեր է առնում արիւնաթաթախ դաշոյնն և երկու սիրահարների ոտքերի տակ մխում իւր կուրծքի մէջ ու նոյն հետայն մեռնում— ոչնչանում . . . : Նրա պիղծ դիակը իսկոյն այնտեղից հեռացնում ու թփերի տակ ծածկում— անյայտացնում են, որ Սուլթանը չը տեսնի:

Տխուր լուրը հասնում է նա և Հաթամ Սուլթանի ականջին: Իւր մեծամեծների հետ շտապում է անձնագոհութիւն կատարուած տեղը . . .

Ներկայ եղողներից քննելով իմանում, թէ գործողութիւնն ինչպէս է կատարուել . . . : Թէպէտ և շատ է սղում— ողբում ու զղջում իւր արածների վրայ ու ինքն իրան է համարում այս գոհողութեանց բուն պատճառը . . . բայց արդէն ուշ էր, եղածն եղել— անցել գնացել էր, լեռ դառնալու այլ ևս ոչ մի յոյս ու ճար չկար . . . : Մի փոքր կանգ առնելով ու մտածելով, ձայն է տալիս, որ չարահոգի Արապին կանչեն իւր մօտ: Բայց տեղեկութիւն են տալիս թէ, նա արդէն ինքն իրան սպանել— ոչնչացրել է:

Պալատականները տեսնելով, որ Սուլթանը քանի մտիկ է տալիս իւր զոհերի երեսին, այնքան բորբոքվում է և յիշողութիւնը կորցնում . . . քիչ է մնում որ մոլեգնութեան հասնի, խիղճը մի փոքր հանգստացնելու համար, առանձնապէս խորհուրդ են տալիս, որ տեղնուտեղը— նրանց սիրած վայրում միմեանցից անբաժան իրար կշտի հանդիսաւոր թափօրով թաղել տայ: Սյս խորհուրդը հաճոյ թուելով Սուլթանին, հրամայում է այդպէս էլ անել . . . :

Պատմում են որ Գահար Միրզի և Զօհրա խանումի սրսկած արեան ամեն մի կաթիլից մի տեսակ պայծառ գունով մշտադալար ծաղիկներ են բուսել իրանց շիրիմների շուրջը, որ գարուն ձմեռ անթառամ են: Իսկ նրանց ամեն մէկի գերեզմանի վերայ սպիտակ ու կարմիր մի մի վարդենիք

են դուրա եկել... և մատնիչ Արապի գերեզմանի վերայ էլ, որ նրանց ոտքերի տակին է. մի մացառ (գարա չալի)... Երբ վարդենիքը փթթելով մօտենում են միմեանց հասնելու, որ բաղեղի նման իրար փաթաթուին ու վարդեր բանան, սև մացառն իւր տեղից երկարելով, գալիս մտնում է վարդենեաց մէջն ու միմեանցից բաժանելով, չի թողնում իրար մօտենալու:

Բարի մարդիք թէ և մշտապէս կտրատում են այդ մացառն ու այրում, բայց և այնպէս տարեց-տարի դարձեալ բուսնում է և չի թողնում, որ գերեզմանի մէջն անգամ, այդ գեղեցիկ վարդերը— Դահար Միրզան ու Զօհրա խանումը մուրազներին հասնեն:

Հեքեաթաբանները վիպասաններից առնելով, ընդհանրապէս ասում են, որ հեքեաթների հերոսներից իրանց մուրազներին չեն հասել Քեարամն ու Ասլին, Ֆարհատն ու Շիրինը, Լէլին ու Մաջնունը, Ղամբարն ու Արզուն, Գիւլշահն ու Վերագը և Դահարն ու Զօհրան...:

Այս սիրոյ զոհերի և հերոսների պատմութիւնն ու լիշատակը դեռ շատ ու շատ երկար տարիներ անջինջ կը մնայ վիպասէր ժողովրդի սրտում, որը անմոռաց միշտ լիշում է ու չի դադարում երգել նրանց անունները:





